

Սյունյաց երկիր

...էլի՛ ես որք ու
արնավառ իմ
Հայաստան - յա՛րն եմ
սիրում:

ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՅ

Գինը 100 դրամ:

ՇԱԲԱԹ
30 ՅՈՒՆԻՍԻ 2012Թ • № 16 (257)

www.syuniacyerkir.am

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ



ՀՐԱԶՅԱ ԹԱՍՐԱԶՅԱՆ

Երևանի Մեսրոպ Մաշտոցի
անվան Մաքենադարանի տնօրեն

Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական նոր համալիրի կառուցման եւ իր կողողային շենքի վերակերտման գործում իրենց վճռորոշ դերն են ունեցել Հայաստանի ներկայիս իշխանություններն ու բարեգործները: Այս խոշոր համալիրը հայ մշակույթի, գիտության եւ ստեղծագործական մտքի թռիչքն է, մի կառույց, որտեղ, կարծես, գործել են մարդկային մեկ էություն, մեկ ոգեղեն մարմին՝ հայ ճարտարապետը, շինարարն ու բանվորը, եւ արդյունքում ստեղծվել է հոյակերտ կառույցը: Ուզում են շեշտել հանգամանքը, որ այս գործում բավականին մեծ ներդրում ունեն սյունեցիները: Նախ պետք է նշեն Մերգեյ Համբարձումյանի անունը, ով առաջինն արձագանքեց ՀՀ նախագահի՝ Մատենադարանը վերակերտելու կոչին: Ուզում են նշել Մաքսիմ Հակոբյանի անունը, ով եւս բավականին խոշոր ներդրում ունեցավ այս գործում: Անուրանալի է Գառնիկ Հովակիմյանի ավանդը շինարարական աշխատանքներում: Նրա ղեկավարած կազմակերպությունն ակտիվ դերակատարություն ունեցավ շինարարության ողջ ընթացքում՝ կատարելով մեծածավալ աշխատանքներ թե՛ նորակառույց մասնաշենքի, թե՛ հնի վերակառուցման գործում՝ սկսած քարի մատակարարումից մինչեւ երեսապատումը, ճանապարհի հարթակների եւ հենապատերի կառուցումը, հին ու նոր շենքերի մաքրման եւ ջրամեկուսացման աշխատանքները: Սյունեցիների աշխատանքը Մատենադարանում սկսվել է հորատումից եւ ավարտվել ներքին հարդարումով: Զեմ կարող չնշել տաղանդաշատ նկարիչ Աշոտ Ավագյանի «Մաշտոցը եւ իր աշակերտները» որմնանկարը, որը զարդարում է Մատենադարանի դահլիճի պատը եւ արված է մանրակարչության ոճով:

Սյունեցիների ավանդը Մաքենադարանի նոր մասնաշենքի կառուցման գործում


ԱՐԹՈՒՐ ՄԵՍԶՅԱՆ. «Կարելոր է այն
համագործակցությունը, որի արդյունքում
ստեղծվում է մնայուն արժեք»

Աշխարհային այցով լինելով մայրաքաղաքում հանդիպեցինք Մաքենադարանի նոր մասնաշենքի նախագծի հեղինակ, ճարտարապետ Արթուր Մեսյանի հետ: Մեր զրույցը Մաքենադարանի նոր կառուցված մասնաշենքի եւ հարակից փորձերի կառուցապատման գործում սյունեցիների ունեցած ավանդի մասին պիտի լիներ, բայց զրույցն սկզբից փոքր-ինչ այլ շեշտադրումներ ստացավ:

– Սկսեմ մի շատ տարօրինակ խնդրից, – ասաց Արթուր Մեսյանը, – առանձնապես կարեւոր է հասկանալ, թե այսօր ինչ է նշանակում հայրենասիրություն: Իմ կարծիքով, հայրենասիրությունն այն է, երբ մեզանից յուրաքանչյուրն ամենայն նվիրվածությամբ մասնակցում է ինչ-որ կարելոր գործի եւ որպես արդյունք ստեղծում հանրության համար կարելոր, մնայուն արժեք (եւ տա Աստված, բոլորն ունենան այդ հնարավորությունը): Եվ տվյալ դեպքում ինձ համար ամենավառ օրինակներից մեկը Մատենադարանի նոր մասնաշենքի շինարարությունն էր, որի արդյունքում ոչ միայն կառուցվեց նոր հրաշալի

գիտական համալիր, այլեւ կազմավորվեց շինարարների, ճարտարապետի, ճարտարագետների ստեղծագործ եռամիասնություն: Կազմավորվեց միջավայր, որտեղ մեզ պարզեցված էր ապրել եւ աշխատել միասին: Բավականին մեծ թվով շինարարներ, բանվորական աշխատուժ, տարբեր ինժեներական կազմակերպություններ մասնակցեցին Մատենադարանի շինարարությանը, եւ, ի վերջո, ստեղծվեց մի շատ կարելոր կազմություն, որ կոչվում է շինարարական եղբայրություն:

Ես ուզում եմ մի քանի խոսք ասել Գառնիկ Հովակիմյանի մասին, նրա մասնակցության վերաբերյալ Մատենադարանի շինարարությանը, որը թերագնահատել չի կարելի: Քանզի բարդ ճարտարապետական կառույցի ճակատային հարդարումն իրագործվեց իր ղեկավարած կազմակերպության ու Սիսիանից երեւան եկած քարագործ հրաշալի վարպետների շնորհիվ, եւ ես ուրախ եմ, որ Մատենադարանի շինարարությունն առիթ հանդիսացավ, որ հնարավորություն ունեցա աշխատել այն մարդկանց հետ, ում վստահեցի, ում հետ, կրկնում եմ, ինձ վիճակվեց ապրել երեք տարի, եւ նորից եմ կրկնում, շատ կարելոր է, որ, ի վերջո, շնորհիվ այդ մարդկանց



Արթուր Մեսյան, Մաքենադարանի նոր մասնաշենքի նախագծի հեղինակ եւ ճարտարապետ

մասնակցության, ստեղծվեց շատ կարելոր մի ազգային արժեք: Ընդհանրապես յուրաքանչյուր աշխատանք կատարելիս շատ կարելոր է իմանալ, թե ում հետ ես աշխատելու: Իսկ Գառնիկը հենց այն անձնավորությունը եղավ, ում հետ իմատակց ճանապարհ անցանք:

Շարունակությունը՝ էջ 2

Ցվերանա Պասկալեան՝ Սյունիքում

Բուլղարացի հայրնի լրագրող, ռեժիսոր, կինովավերագրողների միջազգային ասոցիացիայի անդամ Ցվերանա Պասկալեան 1991 թվականից սկսած Ղարաբաղի մասին փաստավավերագրական ֆիլմեր է նկարահանել՝ «Չույսի բարձունքներ» (1991թ.), «Կրակի արդյոք առավոտը Ղարաբաղում» (1992թ.), «Իմ թանկագին ողջեր ու մեռածներ» (1993թ.), «Ղարաբաղի վերքեր» (1994թ.), «Իրենց հողի գին վորները» (1994թ.), «Լուրջուն» (1995թ.) եւ «Չավաթ եւ ոգի» (2001թ.) Ծուշիի գրավման մասին: Այս ֆիլմերը թարգմանվել են վեց լեզվով:



«Մի անգամ վիրավորվել եմ, դիպուկահարի գնդակը երկու անգամ դիպել է տեսախցիկին: Երբ տեսնում էի, որ ուժերս սպառվում են, նայում էի Ղարաբաղի մանուկների աչքերին եւ մտածում՝ համուն այդ երեխաների իրավունք չունեն թողնել Ղարաբաղը: Ես պատերազմի ժամանակ նաեւ Կապանում եմ եղել, երբ հակառակորդի ինքնաթիռները ռումբեր էին նետել քաղաքի վրա: Բայց քիչ մնացի այստեղ, որովհետեւ անմիջապես պիտի հետ դառնայի եւ պատրաստածս ռեպորտաժը ներկայացնեի համաշխարհային հանրությանը», – հունիսի 22-ին Կապանի մշակույթի կենտրոնում կայացած Արցախի ազատագրության համար մղված հերոսամարտի մասին իր նկարահանած «Ղարաբաղի վերքերը» վավերագրական ֆիլմաշարի շնորհանդեսի ժամանակ ասաց կինովավերագրողը, ով Սյունիքի էր ժամանել ինձամյա որդու հետ: Պասկալեան Ղարաբաղ առաջին անգամ եկավ լրագրողական առաքելությամբ, սակայն տեսնելով խաղաղ բնակչության անլուր տառապանքները, մարդկային իր պարտքը համարեց մնալ Արցախի բնակչության կողքին: Իր ներկայությամբ հույս էր ներշնչում մարդկանց այն աստիճան, որ նրան երբեմն կանգնեցնում էին եւ լրջորեն հարցնում՝ ե՞րբ է գալու հաղթանակի օրը: Պասկալեանի ֆիլմերում

պատերազմը հառնում է ողջ դաժանությամբ: Վավերագրողի տեսախցիկը վերակենդանացնում է Գետաշենի ու Մարտունաշենի տեղահանության տխուր պատկերները, հայրենիք ու օջախ կորցրած մարդու տառապանքը: Հակառակորդի բանակում կրվում էին վարձկաններ, ըստ էության խաբված մարդիկ: Դրանում մեզ համոզում է հարցազրույցն ուկրաինացի վարձկան օդաչու Յուրի Բելիչենկոյի հետ: Նրան միամտացրել էին, թե Ստեփանակերտում քաղաքացիական հասարակություն չկա, մինչդեռ կործանիչի նետած ավիառումբերից մեկն ընկել էր հանրակացարանի վրա, որ բնակեցված էր հարեւան հանրապետությունից բռնագաղթած ընտանիքներով:

Ֆիլմաշարի ցուցադրումից հետո Ցվերանա Պասկալեան դրվագներ պատմեց պատերազմական առօրյայից՝ անկեղծաբանով, թե երբ հեռանում է Հայաստանից, ասես, որբացած լինի, ընդհանրապես այստեղ մնալու է այնքան, մինչեւ տեսնի Արցախի վերջնական հաղթանակը: Եվ հընթացս հիշեց պատմական փաստ, որ Անդրանիկն ու Գարեգին Նժդեհը մարտնչել են Բուլղարիայում:

Ֆիլմի դիտումից հետո կինովավերագրողին երախտագիտության խոսքեր հղեցին Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը, Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանը, իսկ մարզպետարանի մշակույթի բաժնի պետ Սարգիս Դավթյանը հրապարակեց Սյունիքի մարզպետի հրամանը, ըստ որի Արցախի ազատագրության համար մղված հերոսամարտի կինովավերագրությունը կերտելու եւ այդ գոյամարտի մասին համաշխարհային հանրությանը ողջ ճշմարտությունը



Ցվերանա Պասկալեանի մարզկենտրոնում ընկերակցում էին քաղաքապետ Արտուր Աթայանը, փոխմարզպետ Վաչե Գրիգորյանը եւ մարզպետարանի մշակույթի բաժնի պետ Սարգիս Դավթյանը:

մատուցելու ասպարեզում ներդրած ավանդի համար Ցվերանա Պասկալեանին հանձնվեց «Ակտել Բակունց» հուշամեդալ:

Մինչ մշակույթի կենտրոնում տեղի ունեցած միջոցառումը Ցվերանա Պասկալեան հանդիպում էր ունեցել քաղաքապետարանի աշխատակազմի հետ, այցելել Բաղաբուրջի հուշահամալիր, խոնարհվել մեթոդաբանության մարտունակ ընկածների շիրմների առջեւ, հարգանքի տուրք մատուցել Գարեգին Նժդեհի հուշահամալիրում: «Ղարաբաղի վերքեր» վավերագրական ֆիլմաշարի շնորհանդեսը տեղի ունեցավ նաեւ Գորիսում եւ Սիսիանում, իսկ ընդհանրապես ֆիլմաշարի անդրանիկ շնորհանդեսը տեղի է ունեցել 2011-ի նոյեմբերին Երևանում՝ հանրապետության նախագահի մասնակցությամբ: Նախատեսվում է հաջորդ ամսին ֆիլմաշարը ցուցադրել Լոս Անջելեսում: «Ես հույս ունեմ, որ այդ ֆիլմերը կմնան որպես ապացույթ եւ ճշմարտություն Ղարաբաղի մասին, թե ով սանձազերծեց այդ պատերազմը, թե ինչու պիտի ստեղծվեր Ղարաբաղյան բանակը, թե ինչու պիտի ազատագրվեր վեց շրջան, որպեսզի ապահովվեր Ղարաբաղի անվտանգությունը: Այդ ամենն արտացոլված է ֆիլմաշարում: Իսկ իմ երկրորդ առաքելությունն այդ ճշմարտությունն աշխարհին ներկայացնելն է, որպեսզի շատ մոտ ապագայում հասնենք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ճանաչմանը: Ես դրան սպասում եմ հավատում եմ»:

Ցվերանա Պասկալեանի ֆիլմերը դիտելիս խաղաղությունն այլ արժեք ու իմաստ է ստանում...
ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Նվարդ մայրիկն արժանացավ զինկոմիսարիստի պարվոզին՝ հայրենի գյուղի ինքնապաշտպանությանը մասնակցելու համար եւ արժեքավոր հուշանվերի:

Կապանում գորակոչ է

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ

Գարնանային այս գորակոչը հանդիպել է տարածաշրջանում հրադար հաստատելու 18-րդ տարվան: Այդքան տարիք ունեցող տղաներն այսօր գորակոչվում են բանակ: Հայոց զինված ուժերի գարնանային թարմացման շրջանակում հունիսի 24-ին զինակոչիկների հերթական խումբը մեկնեց հանրապետական հավաքակայան: Այդ առթիվ կայացած հանրահավաքի ժամանակ հայրենիքի ապագա պաշտպաններին արժանավայել զինծառայություն մարտեցին Կապանի զինկոմ, փոխզորավար Լեոնիդ Գրիգորյանը, պատերազմի եւ աշխատանքի վերականգնման Կապանի խորհրդի նախագահ Գեղամ Խաչատրյանը: Հերթական գորակոչը պատեհ առիթ

էր մեծարելու մի կնոջ՝ Նվարդ Մարգարյանին՝ Եղվարդ գյուղից, ով Արցախյան գոյամարտի օրերին ոչ միայն չլքեց հայրենի գյուղը, այլեւ սատար կանգնեց կրվող տղաներին: Նվարդ մայրիկն արժանացավ զինկոմիսարիստի պատվոգրին՝ հայրենի գյուղի ինքնապաշտպանությանը մասնակցելու համար եւ արժեքավոր հուշանվերի: Ն.Մարգարյանի մասին հուշեր պատմեցին Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Գրիգոր Թադևոսյանը, Կապանի բրիգադի տանկային զուամարտակի այն օրերի հրամանատար Ռուբիկ Աբրահամյանը:

Այդ օրը բանակ գորակոչվողներն օրինանքների արժանացած մեկնեցին զինծառայության:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Հանդիպեցին մարտական ընկերները

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՕՐԸ

Ամեն տարի մայիս-հունիս ամիսներին հայոց ազգային բանակի 97-րդ բրիգադի 6-րդ մոտոհրաձգային զուամարտակի տղաները հանդիպում են՝ զոհված մարտական ընկերների հիշատակը հարգելու եւ զուամարտակի օրը նշելու համար: Այս տարի հանդիպումը տեղի ունեցավ հունիսի 10-ին: Մասնակիցները Բաղաբուրջի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեցին զոհված զինակիցներին եւ ծաղկեղզում կատարեցին: Այնուհետեւ մեկնեցին Շիկահող, որտեղ կազմավորվել է զուամարտակը եւ հայտնի է հենց Շիկահողի զուամարտակ անվամբ, դրանից հետո ծաղկեպսակ դրեցին անհայտ զինվորի՝ Սրաշենում գտնվող հուշարձանին: Ազատամարտի վերականգնման միության Սյունիքի մարզային կառույցի նախագահ

Ռաֆիկ Տոնոյանը զուամարտակի առաջին հրամանատար Մարտուն Բաղաբաղյանի (հետմահու) եւ Սպարտակ Ստեփանյանի պարգևատրեց «Մայրական երախտագիտություն» մեդալով: Միջոցառմանը ներկա էին զոհված եւ անհայտ կորած ազատամարտիկների մայրեր, այրիներ ու երեխաներ: Ելույթ ունեցան Կապանի զինկոմ Լեոնիդ Գրիգորյանը, Ազատամարտի վերականգնման միության Սյունիքի մարզային կառույցի նախագահ Ռաֆիկ Տոնոյանը, 97-րդ բրիգադի 6-րդ մոտոհրաձգային զուամարտակի շտաբի նախկին պետ Սպարտակ Ստեփանյանը: Վերջինս իր ելույթում ներկայացրեց զուամարտակի անցած մարտական ուղին՝ հիշելով 1993 թ. օգոստոսի դեպքերը, որտեղ ընկան երեք մարտական ընկերներ, իսկ երկուսը վիրավորվեցին: Նա անդրադարձավ նույն թվի հոկտեմբերյան հաղթարշավին եւ 1994թ. հունվարի շրջափակմանը, որի ժամանակ 20 ազատամարտիկ անհետ կորան: 6-րդ զուամարտակի մարտական ուղին սկսում է Շարու քարից, անցնում Շիկահող, Ծավ, Հանդ գյուղերով եւ հասնում մինչեւ Հորադիզ:

ԱՐԱՎԻՆ ԵՎԱՍՏՈՐՅԱՆ

«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր պարոն Ս.Ալեքսանյանին

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԻՑ

Կարդացի սննդամթերքի վերահսկողության մասին (այդ) կառույցի ղեկավարի հետ հարցազրույցը եւ ակամայից հիշեցի

Պարոնյանի խոսքը. երբ ջրամբարում ջուր չկա (տեք սաղված), ինչու՞ ծորակ եք դրել:

Ես լսել եմ, որ կա նաեւ սպառողների իրավունքների պաշտպան մի կառույց եւս, սակայն ամեն պահի հանդիպում ենք սպառողների իրավունքների ոչ թե խախտման, այլ բացարձակ ոտնահարման: Բոլորիս պարզ է, որ լուցկին խիստ անհրաժեշտ պիտույք է, սակայն առնելիս տեսնում եմ՝ շատ դեպքերում տուփում մի քանի հատ է, դա դեռ ոչինչ, բայց վառելուց թշուր է ու հանգում:

Մեր աչքի առջև հացը թխում է ով ուզես, որտեղ ասես, եւ վաճառողները, թխողները, առաքողները մեծամասամբ չունեն արտահագուստ: Հայտնի է, որ միջնադարյան Ֆրանսիայում ամեն մի շտապ ուներ իր չափի, կշռի միավորը: Հիմա մեզ մոտ ոչ ոք չի կարող ասել՝ ինչքան է կշռում մեկ կիլոգրամը, որակի մասին չենք խոսում, ստանդարտի մասին՝ նույնպես:

Մասսայական ձեւ է դարձել կշեռքներն ապրանքների շարանի հետեւում կամ տնակում դնելը եւ առանց կշեռքի հաճախորդներին

սպասարկելը, կամ կշեռքը դրված է լինում գետնին, առնող պիտի կռահե՞ն՝ տեսնի կամ էլ թողնի, հեռանա: Փաստորեն այսօր չի գործում տարրական կրկտուրան, մենք էլ կարծես համակերպվել ենք այդ ամենի հետ: Մի օրինակ եւս՝ թեյն առաքում են դրսից, տուփի վրա գրված է «տեքնեավոր», բացում ես եւ տեսնում՝ հատիկավոր է, բայց չէ՞ որ այն անցել է ստուգման բազմաթիվ կետերով: Հարգելի պարոն Ալեքսանյան, անչափ գոհ եմ թերթից, բայց կարծում եմ, որ անհրաժեշտ է նաեւ

անդրադառնալ առաքող, վաճառող, սպառող համակարգին, թե ինչ իրավունքներ եւ պարտականություններ ունի ուղորդներից յուրաքանչյուրը: Այսօր շարքային մարդկանց կու ժողովրդի համար ցավողներն ու պաշտպանները բավականին «չառաջել» են, Անահիտ Սահիճյանի արտահայտությամբ՝ «անաղուն աշխատող ջրաղացների» թիվը հասել է հազարների: Կուզենայի թերթի էջերում անդրադարձ լինե՞ր դրանց գործունեությանը:
ԱՐԱՎԻՆ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կապան

ՀՈՒՄՈՐԱԼ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրթիռահրետանային զորքերի հիմնադիրը

Գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանի ծննդյան 70-ամյակի առթիվ

2011թ. սեպտեմբերի 21-ին երեւանում եւ 2012թ. մայիսի 9-ին Ստեփանակերտում տեղի ունեցած զորահանդեսների ժամանակ հատկապես ցնցող տպավորություն բողեց արդիական տեխնիկայով զինված հրթիռային եւ հրետանային զորքերի երթը: Զորահանդեսները ապացուցեցին, որ «Պատերազմի աստված» հրետանին, որը վճռորոշ դեր է կատարել Արցախյան ազատագրական պատերազմում, այսօր էլ գտնվում է հայ հրետանավորների նոր սերնդի հուսալի ձեռքերում եւ ամեն պահ պատրաստ է ջախջախիչ հակահարված տալու հակառակորդին: Զորահանդեսներից մեկի ժամանակ, երբ հրապարակվում անցնում էին հրթիռահրետանային զորքերը, հաղորդավարն առաջինը, որպես այդ զորատեսակի հիմնադիր, հանդիսավոր կերպով նշեց գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանի անունը, ով եղել է ՀՀ ՁՈՒ հրթիռահրետանային զորքերի վարչության առաջին պետը, եւ նրա անունը սերտորեն կապված է այդ հզոր զորատեսակի ստեղծման, Արցախյան պատերազմում տարած հաղթանակի եւ խաղաղ տարիներին հրթիռահրետանային զորքերի ամրապնդման ու կատարելագործման հետ:



Վ.Հայրապետյանը ծնվել է 1942թ. հունիսի 25-ին՝ Սյունիքի մարզի Կապանի շրջանի Շիշկերտ գյուղում: Նրա հայրը՝ Ասատուր Ձեհնգիրի Հայրապետյանը, 1939–1940թթ. մասնակցել է խորհրդային-նակական պատերազմին եւ հարթանակից հետո վերադարձել տուն: Երբ 1941թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց խորհրդային Սիւնիքյան վրա, եւ սկսվեց Հայրապետյանը, ով իրավունք ուներ բանակ չզորակցվել, մի քանի ամսանոց զորքում ծառայելու հիմնական պատերազմում: Սիւնիք 1942թ. գարնանը հարձակվեց նրա դիմումը: Այդ ժամանակ ընտանիքում արդեն երեխայի էին սպասում: Լեյտենանտ Ասատուր Հայրապետյանը մարտական ուղին սկսեց Հայրապետյանի ծառայության ժամանակ: Ստալինյան ժամանակահատվածում՝ խարկովի մոտ, ճաշակեց խորհրդային զորքերի համատարած նահանջի դառնությունը, հասավ մինչեւ Ստալինգրադ եւ մասնակցեց այդ քաղաքի պաշտպանությանը: Հենց այդ օրերին էր, որ ստացավ ուշացած, բայց բաղձալի նամակը, որտեղ կինը՝ Նուբարը, հայտնում էր, որ տղան ունեցել է անունը որը Վլադիմիր: Ավաղ, Ասատուրը երբեք չտեսավ որդուն: Ստալինգրադի ճակատամարտի հաղթանակի ավարտից հետո նա մասնակցեց Ուկրաինայի ազատագրման մարտերին եւ 1944թ. աշնանը հասավ Չեխոսլովակիա: Նոյեմբերի 30-ին Սլովակիայի Միխալովցի շրջանում գտնվող Կուցանի գյուղի ազատագրման մարտում վաշտի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Ասատուր Հայրապետյանը հերոսաբար զոհվեց՝ հետմահու պարգևատրվելով Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի բաժնի ընկալ փոքրիկ Վոլոդյային: Դեռ նոր էր հասցրել դպրոց գնալ, երբ 1949թ. մահացավ մայրը: Նրա

խնամակալությունը ստանձնեց Հայրապետյանը, ում անուսիքը նույնպես զոհվել էր Հայրենական մեծ պատերազմում՝ կնոջ խնամքին թողնելով չորս անչափահաս երեխա: Հինգերորդը դարձավ Վոլոդյան: Մինչեւ 1956թ. Վոլոդյան հորաքրոջ երեխաների հետ սովորեց Շիշկերտ գյուղի յոթնամյա դպրոցում, աչքի ընկավ բարձր առաջադիմությամբ, հատկապես մաթեմատիկայի իմացությամբ: 1956թ. Հայրապետյանը հորաքրոջ ընտանիքը Շիշկերտից տեղափոխվեց Երեւանի Շահումյանի շրջան (Մալաթիա) եւ բնակություն հաստատեց այնտեղ: Վոլոդյան նոր վայրում ուսումը շարունակեց N90 միջնակարգ դպրոցում, որն ավարտեց 1960 թվականին: Ընտանիքի հոգսերը որոշ չափով թեթևացնելու նպատակով Վոլոդյան մինչեւ 1961թ. հուլիս աշխատեց Մալաթիայի տրիկոտաժի ֆաբրիկայում, իսկ երբ եկավ բանակ զորակրթվելու ժամանակը, ներկայացավ զինկոմիսարիաներից դպրոցը գերազանց գնահատականներով ավարտած զինակոչիկի դիմումը՝ նրան ուղարկեցին սովորելու Կովկասյան Կարմրադրոշ զինվորական օկրուգի թիֆլիսի հրետանային ուսումնարանում:

Լեյտենանտ Վ.Հայրապետյանին թույլատրեց քննություններ հանձնել Լեյնինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) Մ.Ի.Կալինինի անվան հրետանային ռազմական ակադեմիա ընդունվելու համար: Հաջողությամբ հանձնելով ընդունելության քննությունները՝ ավագ լեյտենանտ Վ.Հայրապետյանը ընդունվեց ակադեմիայի հրամանատարական ֆակուլտետը: Չնայած Վ.Հայրապետյանը չուներ ռուսական կրթություն (ավարտել էր հայկական դպրոց), բայց նա յոթ տարի բանակում անընդմեջ ծառայելու արդյունքում ազատ տիրապետում էր ռուսերենին: Ուստի պատահական չէ, որ ակադեմիայում սովորում էր միայն լավ ու գերազանց գնահատականներով: 1970թ. նոյեմբերի 18-ին՝ Հրետանու եւ հրթիռային զորքերի տոնի նախօրյակին, նրան շնորհվեց կապիտանի զինվորական կոչում: Ակադեմիայում սովորելու տարիներին կապիտան Վ.Հայրապետյանը պարգևատրվեց նաեւ «Զինվորական արիության համար» եւ «Անբասիր ծառայության համար» 3-րդ աստիճանի մեդալներով: Ավարտական տարվա նախօրյակին՝ 1971թ. դեկտեմբերի 21-ին, Լեյնինգրադում ծնվեց Վ.Հայրապետյանի աղջիկը՝ Գայանեն: 1972թ. հունիսի 23-ին լավ եւ գերազանց գնահատականներով ավարտելով հրետանային ակադեմիան՝ կապիտան Վ.Հայրապետյանը նշանակվում ստացավ Բելառուսական զինվորական օկրուգում՝ հրետանային դիվիզիոնի հրամանատար, որը գտնվում էր Օսիպովիչի քաղաքում: 1974թ. օգոստոսին կապիտան Վ.Հայրապետյանը զինվորական ծառայությունը շարունակում է Հեռավորարեւելյան զինվորական օկրուգում՝ կործանիչ-հակատանկային զնդի հրամանատարի առաջին տեղակալ-շտաբի պետ: 1975թ. նոյեմբերի 21-ին առաջ քաշվեց նույն օկրուգի 378-րդ հրետանային զնդի հրամանատարի պաշտոնին, որը տեղաբաշխված էր Պրիմորիեի Պանտելեյմոնովկա բնակավայրում: Միաժամանակ Վ.Հայրապետյանին արտահերթ շնորհվեց փոխգնդապետի կոչում: Գնդի հրամանատար եղած ժամանակ փոխգնդապետ Վ.Հայրապետյանը պարգևատրվել է «Անբասիր ծառայության համար» 2-րդ աստիճանի մեդալով եւ «ԽՍՀՄ զինված ուժերում հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 3-րդ աստիճանի շքանշանով: 1980թ. նա նշանակվեց Հեռավորարեւելյան զինվորական օկրուգի 25-րդ բանակային կորպուսի հրթիռային զորքերի եւ հրետանու շտաբի պետ, մեկ տարի անց՝ նրան շնորհվեց գնդապետի կոչում: Այդ պաշտոնում ծառայեց մինչեւ 1982թ. մայիսի 25-ը: Նոր պաշտոնում Վ.Հայրապետյանը իրեն դրսևորեց որպես գործիմաց եւ ենթակաների նկատմամբ պահանջկոտ, բայց հոգատար հրամանատար: Բանակային կորպուսի հրթիռային զորքերի եւ հրետանու շտաբի աշխատանքները հաջողությամբ կազմակերպելու համար 1982թ. հունվարի 12-ին պարգևատրվեց «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալով: 1982թ. մայիսի 25-ին գնդապետ Հայրապետյանը նշանակվում է Հյուսիսկովկասյան զինվորական օկրուգի 12-րդ բանակային կորպուսի եւ հրետանու շտաբի պետ: Կորպուսի շտաբը տեղակայված էր Կրասնոդար քաղաքում: Հյուսիսկովկասյան զինվորական օկրուգում է մինչեւ 1986թ. սեպտեմբեր: 1986–1989թթ. գնդապետ Վ.Հայրապետյանը նման պաշտոն է վարում 28-րդ բանակային կորպուսում, որը տեղակայված էր Չեխոսլովակիայի Օլոմուոց քաղաքում: 1989թ. նա առաջ է քաշվում նույն կորպուսի հրթիռահրետանային զորքերի գլխավոր հրամանատար, որը համարվում էր գեներալական պաշտոն: 1990թ. մարտին կորպուսը Չեխոսլովակիայից տեղափոխվում է Սիբիրյան զինվորական օկրուգ եւ տեղակայվում Կեմերովո քաղաքում: Չնայած գնդապետ Վ.Հայրապետյանը ծառայությունն անց էր կացնում Հայաստանից հեռու, բայց նա մշտապես հետևում էր հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին: Սուսոգայից եւ Բաքվի հայերի զանգվածային սպանությունները, Հյուսիսային Արցախի հայերի բռնի տեղահանումն ու կոտորածները, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դեմ աղբյուրաբանական զորքերի հարձակումները, մարզի քաղաքների ու գյուղերի ռմբակոծումները, հայրենի Կապանի եւ շրջանի ասիմանումները բնակավայրերի դեմ սանձազերծած ագրեսիան հանգիստ չէին տալիս հայրենասեր բարձրաստիճան սպային: Նա սրտի կանչով 1992թ. հունվարին մեկնեց Երեւան, որտեղ հանդիպեց ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին եւ առաջարկեց իր ծառայությունը հայկական բանակում, Վազգեն Սարգսյանը մեծ սիրով ընդունեց նրան եւ սկսեց իր համաձայնությունը: Դրանից հետո գնդապետ Հայրապետյանը դիմեց Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարին՝ իրեն ուղարկել Հայաստանի Հանրապետության ծառայության մարտական գրգռված ուժերում ծառայելու: Նույն թվականին մայիսին հարձակվեց այդ դիմումը, եւ նա վերադարձավ Հայաստան: ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, հաշվի առնելով գնդապետի 31-ամյա անբասիր ծառայությունը հրթիռահրետանային զորքերում, իր 1992 հունիսի 13-ի հրամանով Վ.Հայրապետյանին նշանակեց ՀՀ ՊՆ հրթիռային եւ հրետանային զորքերի վարչության առաջին պետ: Իրեն հատուկ եռանդով գնդապետ Վ.Հայրապետյանն անմիջապես ձեռնամուխ եղավ հայոց բանակի ամենակարեւոր կրակային ուժի ձեւավորման եւ Արցախյան ազատագրական պատերազմում հրետանու մասնակցության ապահովման գործին: Հարկավոր էր ամենից առաջ կարճ ժամանակամիջոցում համալրել հրամանատարական կազմը հրետանային ուսումնարաններ ու ակադեմիաներ ավարտած սպաներով, ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ հրամոներ, զենք եւ զինամթերք՝ ի հաշիվ Հայաստանում տեղակայված ռուսական 7-րդ գվարդիական բանակի զորամասերի եւ զինանոցների, կախվորել ձեռքի տակ եղած զորանոցները, ստեղծել հրետանային ստորաբաժանումներ ու զորամասեր, հրաձգարաններ եւ վարժակայաններ: Միաժամանակ հարկավոր էր Հայաստանի ասիմանումները շրջաններում եւ Արցախում մարտնչող նորաստեղծ զորամասերը համալրել հրետանու մարտական ստորաբաժանումներով, որոնք պետք է իրենց հուժկու կրակային ուժով սատար կանգնեին մարտնչող ֆիդայիներին ու մոտոհրաձիգներին: Հրթիռահրետանային զոր-

ՀՈՒՆՅԱՆ

Քերը համապատասխան կաղորդելու համարվելու գործում գնդապետ Վ.Յայրապետյանին մեծ օգնություն ցույց տվեցին ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, նրա տեղակալ, գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանը, ՀՀ հանրապետական եւ շրջանային զինկոմիսարիատները՝ գեներալ-մայոր Արտյուշա Թադևոսի Հարությունյանի գլխավորությամբ: Կարճ ժամանակամիջոցում վարչության տրամադրության տակ էին հրետանային ուսումնարաններ ու ակադեմիաներ ավարտած ավելի քան 50 սպա, ովքեր նշանակումներ ստացան ինչպես հրետանային վարչությունում, այնպես էլ նորաստեղծ հրետանային ստորաբաժանումներում եւ զորամասերում: Այսպես, օրինակ, հրետանային ակադեմիա ավարտած գնդապետ Անտոն Արշակի Տատիցյանը նշանակվեց վարչության շտաբի պետ, իսկ ավտոմեքանիկայի գրասենյակի պետ՝ Յուրի Գրիգորյանը (այժմ գեներալ-լեյտենանտ), ում հետո փոխարինեց փոխգնդապետ Ռազմիկ Ռաֆիկի Գարեգինյանը, հրետանային գնդերի հրամանատարներ նշանակվեցին զնդապետներ Ներսես Մերգելի Մուրադյանը, Կանոն Սրապիոնի Մանուկյանը, Մարատ Սենյոնի Դարիբյանը եւ ուրիշներ: Հրետանային բրիգադի հրամանատար նշանակվեց փոխգնդապետ Միքայել Գուրգենի Գրիգորյանը (այժմ գեներալ-լեյտենանտ), ում հետո փոխարինեց փոխգնդապետ Ռազմիկ Ռաֆիկի Գարեգինյանը, հրետանային գնդերի հրամանատարներ նշանակվեցին զնդապետներ Բերիկ Ալեքսանդրի Ապրիանովը (այժմ՝ գեներալ-լեյտենանտ), Մարտին Նազարի Կարապետյանը (այժմ՝ գեներալ-լեյտենանտ, Վազգեն Սարգսյանի անվան ինստիտուտի պետ), Ալբերտ Աշոտի Դավթյանը, այնուհետեւ՝ Ալբերտ Լեւոնի Սկրյուչյանը, Ռայմոնդ Արմենակի Մազառյանը, ԼԳՀ ՊԲ հրետանու պետ, գնդապետ ժորա Սահակի Գասպարյանը (այժմ՝ գեներալ-մայոր, Արցախի հերոս) եւ ուրիշներ: Հայկական բանակում բարձր պաշտոնի նշանակվեցին նաեւ հրետանային ուսումնարաններ ավարտած գեներալ-մայոր (այժմ՝ գեներալ-լեյտենանտ) Մուրազ Սարուխանի Սարգսյանը (ՀՀ ՊՆ մարտական պատրաստակալության վարչության պետ), գնդապետ Ալիկ Արամի Մարտիրոսյանը (ՀՀ զինկոմի առաջին տեղակալ) եւ ուրիշներ:

Հայկական հրետանային առաջին ստորաբաժանումները լեռնային պայմաններում տեղի ունեցած մարտական գործողությունների ժամանակ իրենց դրսևորեցին գերազանց՝ հուսալի կրակային վահան ստեղծելով ֆրոնտային ջրկատների ու մոտոհրածիգների համար եւ մեծ դեր կատարեցին Արցախյան ազատագրական պատերազմում տարած հաղթանակում: Հրետանային եւ հրթիռային զորքերի վարչության պետը բազմիցս անձամբ է մասնակցել մարտական գործողություններին եւ իր խիզախությամբ օրինակ հանդիսացել հայ քաջորդիների համար: Նա 1992-1994թթ. ակտիվորեն մասնակցել է Լաչինի, Ֆարվառուի, Օմարի լեռնանցքի, Կապանի շրջանի եւ այլ վայրերում տեղի ունեցած վճռորոշ գործողություններին: 1992թ. հոկտեմբերի 8-ին, լինելով առաջին գծում եւ ղեկավարելով հրետանու կրակը, գնդապետ Վ.Յայրապետյանը նպաստեց Լաչինի (այժմ Բերձոր) շրջանում տարած հաղթանակին: Այդ մարտում՝ չնայած վիրավորվեց ձեռքից, սակայն չթողեց հրամանատարական կետը մինչեւ մարտի ավարտը: Իր խիզախությամբ գնդապետ Վ.Յայրապե-

տյանն աչքի ընկավ նաեւ 1994թ. հունվարի 1-ից մինչեւ փետրվարի 25-ը տեղի ունեցած Քարվաճառի 2-րդ գործողության ժամանակ, որն ավարտվեց Օմարի լեռնագագաթի գրավումով: Մարտերից մեկի ժամանակ՝ թշնամու կրակի տակ ամեն վայրկյան վտանգի ենթարկելով կյանքը, Վ.Յայրապետյանը վարորդի հետ միասին «Կամազ» ավտոմեքենայով Սեյիդարից տեղափոխում է լքված 4 միավոր «Դ-30» հրանոթ, վերացնում դրանց անսարքություններն ու սպանիչ կրակ բացում թշնամու վրա՝ խուճապ առաջացնելով նրա շարքերում: Քաջալերվելով կատարվածից՝ հայկական ուժերը շարունակում են հարձակումը, թշնամուն ցած շարտուն Օմարի բարձունքից, ազատագրում հարակից բնակավայրերը:

Վ.Յայրապետյանը պատերազմի յուրաքանչյուր դադարը կարողանում էր օգտագործել հրետանու ամրապնդման եւ կատարելագործման համար: Նա մեծ ուշադրություն էր դարձնում նորաստեղծ հրետանային ստորաբաժանումները հմուտ մասնագետ-կադրերով համարելու, ուսումնական բազաներ եւ հրաձգարաններ ստեղծելու գործին:

Նրա նախաձեռնությամբ Ջրվեժում բացվեցին հրետանավոր սպաների վերապատրաստման առաջին դասընթացները եւ Լուսակերտում կազմավորվեց առաջին ուսումնական հրետանային գունդը: Իսկ երբ բացվեց ՀՀ ՊՆ բազմաբնույթ ռազմահրամանատարական բարձրագույն ուսումնարանը (այժմ՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ), նրա համառության եւ ակտիվ գործունեության շնորհիվ ստեղծվեց հրետանու ամբիոնը, որը դարձավ հզոր ուսումնասիրողական բազա հրետանավոր սպաների պատրաստման համար: Այդ հարցում Վ.Յայրապետյանին մեծ աջակցություն ցույց տվեց ինստիտուտի առաջին պետ, գեներալ-մայոր Սերգեյ Սահակի Մարտիրոսյանը: Պատերազմական պայմաններում բնականաբար շարքից դուրս էր գալիս հրետանային տեխնիկան: Հարկավոր էր դրանք շուտափույթ վերանորոգել տեղում: Այդ նպատակով Վ.Յայրապետյանի առաջարկությամբ ստեղծվեցին հրետանային գործում հատկապես աչքի ընկավ այժմ փոխգնդապետ Միքայել Նազարեթյանը:

Ինչպես հայտնի է, մարտական գործողությունները շարունակվեցին մինչեւ 1994թ. մայիսի 15-ը, երբ աղբյուրանակալ կողմը նորանոր կորուստներից խուսափելու համար ստիպված էր դադարեցնել իր իսկ սանձազերծած պատերազմը եւ զինադադար կնքել:

Հաշվի առնելով գնդապետ Վ.Յայրապետյանի կազմակերպչական մեծ ընդունակությունները եւ կատարած շնորհակալ աշխատանքը հայկական զինուժի հրետանային եւ հրթիռային զորքերի կազմավորման ու ղեկավարման գործում, Արցախյան պատերազմում նրա ակտիվ մասնակցությունը՝ 1994թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության տարեդարձի օրը, ՀՀ նախագահի հրամանագրով Վ.Յայրապետյանին շնորհվեց գեներալ-մայորի կոչում:

Ձինադադարի կնքումից հետո մինչեւ 2003թ. հոկտեմբերի 16-ը գեներալ-մայոր Վ.Յայրապետյանը ՀՀ ՁՈՒ հրթիռահրետանային զորքերի վարչության պետի պաշտոնում իր ողջ ուժերն ու կարողություններն անձնացրո ընդհանուր առմամբ կա-

րեւոր զորատեսակի կատարելագործման եւ ամրապնդման գործին: Գեներալ-մայոր Վ.Յայրապետյանն արժանի է եղել էլ ավելի բարձր պաշտոնների, դեռեւս 1995թ. ՀՀ ՁՈՒ գլխավոր շտաբի պետ Նորատ Տեր-Գրիգորյանցն առաջարկել էր նրան նոր պաշտոն՝ պաշտպանության նախարարի տեղակալ՝ սպառազինության գծով, եւ տվել ժամանակ՝ մտածելու առաջարկի մասին ու տալու համաձայնություն, սակայն նա համառորեն չի ցանկացել կիսատ թողնել սկսած գործը, շնորհակալություն հայտնելով իր անձի նկատմամբ ուշադիր լինելու համար, եւ շարունակել է բարձր պատասխանատվությամբ զարգացնել ու հզորացնել հայկական բանակի գլխավոր կրակային ուժը՝ հրթիռահրետանային զորքերը, որին նվիրված է մնացել մինչեւ այսօր: Հրթիռահրետանային զորքերը գեներալ-մայոր Վ.Յայրապետյանի ղեկավարությամբ հասան զգալի հաջողությունների՝ մարտական պատրաստակալության բարձրացման եւ անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը բարելավելու ուղղությամբ: Հետեւելով մեծ զորավար Սուվորովի՝ «Դժվար՝ ուսման մեջ, հեշտ՝ մարտում» նշանաբանին, գեներալն անձամբ էր կազմակերպում եւ մասնակցում իրթիռահրետանային զորքերի ճանբարային հավաքների, որոնց ընթացքում մեծ ուշադրություն էր հատկացվում զորամիավորումների եւ զորամասերի դաշտային պատրաստվածության, մարտավարական, մասնագիտական եւ տեխնիկական ուսուցման որակին, անձնակազմի, հատկապես սպաների հրետաձգության եւ կրակի կառավարման հմտություններին: Հրետանու ուսուցումը դաշտային պայմաններում առաջին նախադեպ էր ՀՀ ՁՈՒ-ում, որը կիրառեց գեներալ-մայոր Վ.Յայրապետյանը, եւ որին հետեւեցին մյուս զորատեսակները: Նրա նախաձեռնությամբ Լուսակերտի հրետանային ուսումնական զորամասի տարածքում կանգնեցվեց Գարեգին Նոյեմի արձանը:

2003թ. հոկտեմբերի 23-ին, 60 տարին լրանալու կապակցությամբ, գեներալ-մայոր Վ.Յայրապետյանն անցավ թոշակի: Սակայն հաշվի առնելով նրա 42-ամյա զինվորական անբասիր ծառայությունը, գիտելիքներն ու հարուստ փորձը, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի որոշմամբ գեներալ-մայոր Վ.Յայրապետյանն ընդգրկվեց ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայակազմի հանձնաժողովի կազմում: Առ այսօր գեներալը մեծ ակտիվությամբ մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին, հաճախակի լինում զորամասերում, ուսումնասիրում փաստացի իրադրությունը եւ նոր գործնական առաջարկություններ պատրաստում հայկական բանակի մարտունակության բարձրացման, ամրապնդման եւ առաջիկա անհետաձգելի խնդիրների կարգավորման մասին:

Բացի նշված հանձնաժողովում կատարած աշխատանքից, գեներալ-մայոր Վ.Յայրապետյանը, սկսած 1995թ., երբ հիմնադրվեց ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» հանդեսը, նրա խմբագրական խորհրդի անդամն էր: Հանդեսի մի շարք համարներում գեներալն արժեքավոր հոդվածներ է տպագրել հրետանու մարտունակության պահպանման առանձնահատկությունների, փողային հրետանու զարգացման ուղղություններում եւ հեռանկարների եւ այլ հիմնահարցերի մասին, որոնք անգնահատելի օգնություն են ցույց տվել հրետանավոր սպաներին՝ խորը շարունակությունը՝ էջ 7

Ամալյա Մովսիսյան

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

81 տարեկանում երկրային կյանքին հրաժեշտ տվեց շատերի կողմից սիրված, երկարամյա մանկավարժ Ամալյա Մովսիսյանը:



Ծնվել է 1931թ. Կապանի շրջանի Մարտիկ գյուղում: Տարրական կրթությունը գյուղում ստանալուց հետո տեղափոխվել է Կապանի N1 միջնակարգ դպրոց: Աշխատել է Ուժանիս գյուղի դպրոցում՝ ուսուցչուհի (Կապանի շրջան): Աշխատանքին զուգընթաց ընդունվել է Երեւանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի քիմիա-բնագիտության ֆակուլտետը՝ հեռակա կարգով: 1955թ. բուհն ավարտելուց հետո նշանակվել է Կապանի շրջանի եղվարդ գյուղի դպրոցի ուսմասվար: 1956-ին տեղափոխվել է Արծվանիկի միջնակարգ դպրոց՝ դասավանդել քիմիա-բնագիտություն առարկաներ, հետագայում աշխատել որպես դասվար: Ա.Մովսիսյանը բարձրակարգ մանկավարժ էր ոչ միայն կրթությամբ, այլև կոչումով: 1966թ. գյուղական ուսուցչուհին Մոսկվայում մասնակցել է առաջավոր դասվարների գիտական համաժողովի՝ ներկայացնելով գյուղական

դպրոցում դասավանդման իր մեթոդիկան: Երկար տարիներ ղեկավարել է տարրական դասարանների մեթոդիավորման աշխատանքները, մեթոդամանկավարժական թեմաներով հանդես եկել շրջանի դպրոցներում: Ամալյա Մովսիսյանը հարգանքով էր վերաբերվում շրջապատին, ճիշտ հաղորդակցվում ոչ միայն կուլեկտիվի անդամի, այլև ամեն մի աշակերտի ու ծնողի հետ: Հրաշալի քաղաքացու կերպար էր՝ ընդօրինակելի շատերի համար, սիրով էր իր մանկավարժական հարուստ փորձը փոխանցում գործընկերներին, արժեքավոր խորհուրդներ տալիս: Մասնավարժական գործունեության 56 տարուց 52-ն անցկացրել է Կապանի շրջանի Արծվանիկի միջնակարգ դպրոցում: Արժանացել է զովասարանգրների, պատվոգրերի եւ կրթաշնչանքների: Կրթել ու դաստիարակել է հինգ երեխա, բոլորն էլ բարձրագույն կրթություն են ստացել: Նա մայրն է Արցախյան զոյամարտի ակտիվ մասնակից, «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի ասպետ, հայրենի եզերքի պաշտպանության համար «Կապան» ոսկե հուշանշանի արժանացած փոխգնդապետ Արարատ Մանուչարյանի:

Ամալյա Մովսիսյանի հիշատակն անմար կմնա սաների, գործընկերների եւ ճանաչողների սրտերում:

Արծվանիկի միջնակարգ դպրոցի կուլեկտիվ

Յուրիկ Դաղունց

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Մեզմից հեռացավ վաստակաշատ վիրաբույժ եւ առողջապահության հմուտ կազմակերպիչ Յուրիկ Դաղունցը:



Ծնվել է 1943թ. սեպտեմբերի 20-ին Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում՝ կուլտետեսական ընտանիքում: 1961թ. ավարտել է Խնձորեսկի միջնակարգ դպրոցը, ապա ընդունվել է ավարտել է Երեւանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը եւ գործուղվել աշխատելու գյուղի տեղամասային հիվանդանոցում:

1971թ. Երեւանի բժիշկների կատարելագործման ինստիտուտում մասնագիտացել է որպես վիրաբույժ եւ նշանակվել Գորիսի շրջանային բուժմիավորման ընդհանուր վիրաբույժ, 1991-97թթ. աշխատել է Գորիսի միջշրջանային արյան փոխներարկման կայանում՝ գլխավոր բժիշկ եւ վիրաբույժ:

2008-ից դասավանդել է նաեւ Գորիսի պետական մանկավարժական թղեղում: 1970թ. ընտանիք է կազմել բժշկուհի Անահիտ Պետրո-

սյանի հետ: Նրանք ունեցել են երեք դուստր, ովքեր նույնպես բժիշկներ են:

Իր ողջ գործունեության ընթացքում Յուրիկ Դաղունցը ցուցաբերել է բարձր պատասխանատվություն, անսահման ընդունակություն մասնագիտության եւ հիվանդների: Արցախյան պատերազմի ընթացքում փրկել է բազմաթիվ զինվորների կյանք, իր արժանի տեղն ունեցել Գորիսի առողջապահության զարգացման գործում: 1995թ. ՀՀ առողջապահության նախարարության որակավորման հանձնաժողովը նրան շնորհել է բարձրագույն կարգի վիրաբույժի որակավորում: Պարգևատրված է «1992-1994թթ. մարտական գործողությունների մասնակից», «Առողջապահության գերազանցիկ» կրծքանշաններով, բազմիցս արժանացել է շնորհակալագրերի, խրատանքների, համարվում է Արցախյան պատերազմի վետերան:

Գորիսի բժշկական կենտրոնի կուլեկտիվը ցավում է երկարամյա բժիշկ, լավագույն գործընկեր Յուրիկ Դաղունցի կորստի համար եւ իր զորակցությունը հայտնում հանգուցյալի հարազատներին:

«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Գորիսի պետական թղեղ» ՊՈԱԿի դասախոսական եւ ուսանողական կուլեկտիվները խորապես վշտացած են թղեղի դասախոս Յուրիկ Դաղունցի անժամանակ մահվան կապակցությամբ եւ ցավակցում են նրա հարազատներին ու մերձավորներին:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Սրտանց շնորհավորում ենք ՀՊԵՀ Կապանի մասնաճյուղի տնօրեն Լեռնիկ Պետրոսյանին՝ պրոֆեսորի կոչում եւ նույն ինստիտուտի դասախոս Արթուր Սարգսյանին՝ ղոցնտի կոչում ստանալու առթիվ, ցանկանում անուր առողջություն, հաջողություններ նրանց բուհական գործունեության ճանապարհին:

Կապանի N2 ավագ դպրոցի կուլեկտիվ

ՀՈՇՈՏՎՈՂ ՄԵՂՐԻ



Զվար ձորը, կենտրոնում ջրի մաքրման կայանը:

խուրջին լիճը, Սրտներ լիճը... Լճերի առատության պատճառով է, որ Զվարի մերձակա գյուղն անվանվել է Լիճք:

Հիմա այն մասին, թե ինչ է կատարվում Զվարում: Նախապես ասենք, որ մեզ չհաջողվեց Լիճքի գյուղապետարանից պաշտոնական տեղեկատվություն ստանալ կատարվող եւ կատարվելիք գործերի մասին (գյուղապետի պահվածքին դեռ կանոնադրամանք), ինչի համար մեր տեղեկությունը հիմնված է Լիճք գյուղի եւ Մեղրի քաղաքի բնակիչների հետ ունեցած զրույցների վրա: Եվ այսպես՝ ըստ մեղրեցիների ու Լիճքի բնակիչների՝ բուն Զվարի տարածքը գյուղապետ Հովհաննեսը մի քանի տարի առաջ պայմանագրով, վարձակալությամբ տվել է չինական ինչ-որ կազմակերպության, որն էլ այնտեղ պետք է՝ նախ՝ որոնողական-երկրաբանական աշխատանքներ կատարի, որից հետո սկսի ընդերքի բաց արդյունահանում: Ըստ գյուղի բնակիչների՝ չինացիներն արդեն մի քանի անգամ եկել են գյուղ, դիտարկել տարածքը, նույնիսկ աշխատողներ փնտրել: Սպասվում է, որ հորատող երկու մեքենա մոտ ժամանակներս կբերվի գյուղ, ու կմեկնարկեն աշխատանքները: Գյուղում խոսակցություն է շրջանառվում նաեւ այն մասին, որ ապագայում (հանքավայրը շահագործելու դեպքում) կբանդեն ու այլ վայր կտեղափոխեն (դեպի հարավ) Զվարի եկեղեցին, իսկ մաքրման կայանից քիչ ներքե կկառուցվի հարստացուցիչ ֆաբրիկա: Պոչաքարի մասին՝ ոչ մի խոսք:

Հիշեցնենք նաեւ, որ մաքրման կայանի ու վանքի մերձակայքում (200-400մ հեռավորության վրա) 1960-ական թվականներին սկսած (մինչեւ 1985թ.) բացվել է մի քանի հորատանք եւ հիմնովին ուսումնասիրվել է տարածքի ընդերքը: Հորատանքներից մեկն այնքան մոտ է գտնվել եկեղեցուն, որ դատարկ ապարները լցվել են եկեղեցու բակի հյուսիս-արեւմտյան հատվածը, որտեղ էլ առաջացել է դատարկ ապարների մի ամբողջ բլրակ:

Ինչո՞ւ խորհրդային ժամանակներում ձեռնպահ մնացին Մեղրու շրջանի բազմաթիվ, այդ թվում՝ Զվարի հանքավայրի շահագործումից: Տարեց մեղրեցիները, նաեւ այդ օրերին շրջանում աշխատած երկրաբաններն ասացին, որ Մեղրու շրջանի հանքապաշարներն առավելազույց ուղեկցվում են ռադիոակտիվ էլեմենտներով: Ինչո՞ւ է մարդկանց առողջությանն ու կյանքին սպառնացող նյութերով: Նաեւ այդ պատճառով այն ժամանակ հրաժարվեցին Զվարի հանքավայրի շահագործումից:

Ի՞նչ հանքավայր է այնտեղ նշանակվել: Ոմանք կարծում են, թե խոսքն ուրանի հանքավայրի մասին է, իսկ մյուսները՝ պղնձի ու ոսկու հանքավայրի են կարծում:

Արդեն ասացինք, որ Զվարում կատարվող ու կատարվելիք աշխատանքների մասին տեղեկատվությունը ներկայացնում ենք ըստ մեղրեցիների պատմածի: Եվ քանի դեռ պաշտոնական տեղեկատվություն չկա, ուրեմն հիմք ենք ընդունում մարդկանց ասածը, մասնավորապես՝ պատկան մարմինները չեն շտապում հերքել համառոտ շրջանառվող խոսակցությունները:

Իսկ ինչո՞ւ պաշտոնական տեղեկատվություն չկա: Կարծեցյալ հանքավայրը գտնվում է Լիճքի վարչական տարածքում: Լիճքի գյուղապետը՝ Հովհաննես անուն, ահաբեկված-սարսափած հրաժարվեց հեռախոսային զրույցից եւ միայն մի նախադասություն ասաց. «Ամեն ինչ մարդպետարանում գիտեն, գնացեք եւ մարդպետարանից հարցրեք»: Սեզ հետաքրքրող

հարցերը նրա հետ պարզաբանելու հաջորդ փորձերը նույնպես անհաջողության մատնվեցին: Եվ այդպես էլ չիմացանք՝ արդյո՞ք չինացիների հետ կնքվել է պայմանագիր (եթե չի կնքվել, ապա ինչո՞ւ չինացիները գալիս-գնում են), քանի՞ հա-ի մասին է խոսքը եւ կոնկրետ ո՞ր տարածքն է ընդգրկում ապագա հանքավայրը, արդյո՞ք խոսքը միայն երկրաբանական աշխատանքների մասին է, թե՞ արդյունահանման մասին նույնպես, արդյո՞ք առանց բարձր իշխանությունների ուն Հովհաննես կարողացել է հնամենի այդ եկեղեցու եւ խնամքի ջրի մաքրման կայանի ու ջրահավաք ավազանի մերձակայքը տրամադրել ինչ-որ կազմակերպության... Ինչպես մեղրեցիները պատկերացնում են մատնացույց արեց Սյունիքի մարզպետարանը: Գյուղապետի մեծ խուսափողական վիճակը, սակայն, համագյուղացիները համարեցին գավառական պրիմիտիվ շուտարիություն, որը ծիծառ, իսկ ավելի միջոց՝ խղճմտանք է առաջացնում: Գյուղացիներից մեկն ավելի դիպուկ արտահայտվեց. «Տասնհինգ տարի հենց այդպես էլ այդ մարդը «ղեկավարում է» Լիճքը՝ շատ-շատ հարցերում ծաղկած՝ ենթադրելով, որ իր արած-չարածն աննկատ կմնա»: Մեկ ուրիշ համագյուղացի էլ ասաց, թե «Գյուղապետը համայնքային գործերն այնքան թաքուն է վարում, որ գյուղի բնակիչները երկու տարի շարունակ չեն կարողանում իմանալ, թե ո՞վ (որ կազմակերպությունը) եւ ի՞նչ պայմաններով է Լիճք գետի վրա հեկ կառուցում, ո՞վ է ի՞նչ պայմաններով է թույլատրել դեռեւս անհայտ այդ կազմակերպությանը՝ հողային աշխատանքներ կատարել գյուղամերձ անտառներում, փոխել գետերի հունը...»:

Մենք փորձեցինք հետաքրքրող հարցերի պատասխանը ստանալ մարզպետարանից: Եվ ահա թե ինչ ասացին մարզպետարանի պատասխանատուները թերթի լրագրող Ջարինե Համբարձումյանին:

Վաչե Գրիգորյան, Սյունիքի փոխմարզպետ. «Սյունիքի մարզպետարանում Զվարին առնչվող քննարկում չի եղել, եւ մենք պաշտոնական ոչ մի թույլտվություն չենք տվել որեւէ կազմակերպության: Ընդհանրապես լիցենզիա տրվել է ենթագետիկայի եւ բնական պաշարների նախարարությունը, ինչից հետո միայն տվյալ կազմակերպությունը պետք է գա համայնք, ապա համայնքի իշխանությունը հողատնային պիտի կատարի: Մարզպետարանում նույնիսկ չգիտենք չինական կազմակերպության անվանումը»:

Մուշեղ Կոստանյան, Սյունիքի մարզպետարանի հողաշինության եւ հողօգտագործման բաժնի պետ. «Որքանով տեղյակ եմ՝ չինացիները ներկայացել են համայնքի իշխանությանը, բայց համայնքը դեռեւս հողատնային չէ արել: Անեմ նաեւ, որ լիցենզիա տրվում է հայկական կազմակերպություններին»:

Անշուշտ, հիմքեր չունենք մարզպետարանի պատասխանատուներին չհավատալու: Պարզապես այս խոսակցությունները լսելուց հետո օրինաչափ հարցեր են առաջացնում. ինչո՞ւ է գյուղապետ Հովհաննեսը բոլոր հարցերին պատասխանելու փոխարեն մարզպետարանի անունը տալիս, ինչո՞ւ են չինացիները եկել-գնացել, ինչո՞ւ են գյուղապետը վախեցում ու փախչում հրապարակային խոսակցությունից, եթե որեւէ արտառոտ բան չկա, իսկապես՝ մեզանում օտարերկրյա կազմակերպություններին լիցենզիա չի տրվում հանքարդյունահանման համար... Զվարի տարածքում հնարավոր հանքարդյունահանման հետեւանքները հասկանա-

Զվարի գլխին ամպեր են կուրակվել

...Գյուղ էր եւ վանք Արեւիք գավառում: Ըստ Հին հարկացուցակի՝ Տաթևի վանքին տարեկան վճարում էր 12 միավոր հարկ (Ստեփանոս Օրբելյան, «Սյունիքի պատմություն», Երեւան-1986թ., էջ 403): Ղեւնդ Ալիշանն էլ Զվարը նույնացնում է Դավիթ Բեկի հայկական իշխանության Զվար գյուղի (ավանի) հետ: Այդ տարածքով է հոսում համանուն գետը. Մեղրի գետի աջ վտակներից է, բայց երբեմն Մեղրի գետն էլ Զվար էր կոչվում: 12կմ երկարությամբ գետը սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնաշղթայի փեշերից: Առավել մեծ նշանակություն է ունեցել Զվարի կամ Զվարի վանքը: Ստեփանոս Օրբելյանի կողմից առաջին անգամ հիշատակվող վանքը վերջին անգամ հիմնադրվել է 17-րդ դարում եւ մինչեւ այժմ կանգուն է: Եկեղեցու մեջ պահպանված խաչքարերը, պատկերաքանդակները վկայում են, որ Զվարը քրիստոնեական Սյունիքի հնագույն սրբավայրերից է: Ըստ Նաիրա Հայրապետյանի՝ եկեղեցին կրում է Սբ Հռիփսիմե անունը (մեղրեցի Գուրգեն Վաչյանից է իմացել): Իսկ Ս.Ակրտչյանը («Տոներ», Երեւան-2010թ.) Զվարի եկեղեցին նշում է Սբ Ստեփանոս անվամբ: Դարեր շարունակ Զվարի վանքը կամ եկեղեցին ուխտավայր է եղել հավատացյալների համար: Ըստ Ղեւնդ Ալիշանի՝ Կարդավառին մարդիկ ուխտագնացություն էին կատարում Զվար: Իսկ ըստ Ս.Ակրտչյանի վերը նշված գրքի՝ Համբարձում տոնի առիթով էլ հավատացյալներն ուխտագնացություն էին կատարում Զվարի վանք:

Ներկայումս Զվարը մտնում է Լիճքի վարչական տարածքի մեջ: Զվարը հանդիսանում է Մեղրի քաղաքին խմելու ջուր մատակարարող գետը, ինչի համար եւ 1984թ. այնտեղ կառուցվեց մաքրման կայան, որը ներկայումս վայրկյանում թողարկում է 80լ բարձրակ ջուր: Մաքրման կայանի ջրընդունիչը գտնվում է վանքից մոտ 400մ հեռա-



ՍԵՐԳԵՅ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մեղրու քաղաքապետ



ՍՈՒՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
«Արեւիք» ազգային պարկի տնօրեն



ՀԱՅՅԱ ԱՐԱՄՅԱՆՅԱՆ
«Հայքումուղկոյուղի» ՓԲԸ «Հարավային» մասնաճյուղի Մեղրու ենթաբաժնի մասի պետ



ՎԱՍԻԼ ԱՌԱՔԵՆՅԱՆ
Մաքրման կայանի պահակ, Լիճք գյուղի բնակիչ

վորության վրա: Վանքից մոտ 3կմ հեռավորության վրա էլ գտնվում է Ազարակին ու Կարճեւանին խմելու ջուր մատակարարող խողովակաշարի ջրընդունիչ կետը: Զուրն ընդունվում է դարձյալ Զանգեզուրի լեռնաշղթայի փեշերից հոսող Այրիջուր, Բաղաքար եւ Մարգի գետակներից: Մաքրման կայանը գտնվում է Կարճեւանի մոտակայքում եւ վայրկյանում թողարկում է 100-120լ ջուր, որը լիուլի բավարարում է Ազարակի, Կարճեւանի եւ Ազարակի պղնձամուղիքներային կոմբինատի կարիքները:

Փոքրիկ այս տեղեկանքը երիցս վկայում է, որ Զվարը ոչ միայն հնավայր ու սրբավայր է, այլեւ ջրահավաք ավազան Մեղրու գրեթե ողջ շրջանի համար (բացառությամբ Ըվանիձոր, Ավանք, Նյուվադի գյուղերի): Ավելին՝ Զվարում է գտնվում (ինչպես արդեն նշեցինք) շրջանի ամենախոշոր եւ արդիական մաքրման կայանը, որը խմելու ջուր է մատակարարում Մեղրի քաղաքին:

Խնդրո առարկա տարածքը գտնվում է «Արեւիք» ազգային պարկի անմիջական հարեւանությամբ (վանքից մինչեւ պարկի տարածք մոտ 400մ է): Իսկ ջրահավաք ավազանը եւ հատկապես Ազարակին ու Կարճեւանին խմելու ջուր մատակարարող ջրընդունիչ կետը գտնվում են ազգային պարկի տարածքում:

Զվարի տարածքը ոչ միայն Մեղրու կամ Սյունիքի մարզի, այլեւ Հայաստանի Հանրապետության ամենագեղատեսիլ վայրերից է: Զվար գետի վրա են գտնվում երկու տասնյակի հասնող հրաշք ջրվեժները, որից վեցն առավել գեղատեսիլ են ու հասանելի: Զրվեժների մի մասն էլ «Էքստրեմալ» պայմանների սիրահար զբոսաշրջիկների համար է՝ ի վերուստ տրված: Ավելի վերել՝ ծովի մակերեսից 3200մ բարձրության վրա է գտնվում Գոգի լիճը (զբաղեցնում է 10հա մակերես), որը կոչվում է նաեւ Կապույտ, Կապուտան լիճ: Գոգի լճի մերձակայքում են գտնվում

Մուշեղ Կոստանյան

Սուրեն Համբարձումյան

Սուրեն Համբարձումյան

Սուրեն Համբարձումյան

Սուրեն Համբարձումյան



ՀՈՇՈՏՎՈՂ ՄԵՂՐԻ

Ըլու համար «Սյունյաց երկիր» ստեղծագործական խումբը հունիսի 19-ին այցելեց Զվար: Զարվիրել էինք «Արեւիք» ազգային պարկի տնօրեն Սուրբի Զովհաննիսյանին, «Հայքնուդկոյուդի» ՓԲԸ «Հարավային» մասնաճյուղի Մեղրու ենթատեղամասի պետ Հայկ Աղամալյանին: Մեր գրույցին մասնակից դարձրինք նաեւ մաքրման կայանի պահակ Վասիլ Ալեքսանյանին, ով քաջածանոթ է տեղանքին: Հայկի առեւելով քննարկվող հարցի լրջությունը՝ Լիճքի գյուղապետ Զովհաննես Միրզոյանին չէինք հրավիրել հանդիպման: Իսկ հրավիրվածները, միայնակ լրացնելով, թույլ տվեցին ընդհանուր պատկերացում կազմել քննարկվող հարցի վերաբերյալ:

Հայկ Աղամալյան. «Մենք մույնպես պաշտոնական տեղեկատվության չենք տիրապետում, բայց եթե նման որոշում կա, պետք է հավաքվել ու մասնագետների մասնակցությամբ քննարկում կազմակերպել: Եթե խոսքը մաքրման կայանի հարեւանությամբ եղած հորատանցքերը վերաբացելու մասին է, ապա դա շատ ռիսկեր է պարունակում, իսկ ավելի ճիշտ՝ կվտանգվի Մեղրի քաղաքի ջրամատակարարման ամբողջ համակարգը: Տարածքը, որի մասին մարդիկ խոսում են, ջրահավաք ավազան է ամբողջ Մեղրու շրջանի համար, ուստի եւ պետք է բազմակողմանի քննության ենթարկել հարցը: Բայց չեն ուզում առաջ ընկնել եւ վերջնական եզրակացություններ անել, համապատասխան մարդիկ պետք է նախեւառաջ հավաստի տեղեկատվություն ներկայացնեն ծրագրի մասին, որից հետո վերջնական կարծիքը կհայտնենք»:

Սուրբի Զովհաննիսյան. «Որպեսզի հիմնավոր քննարկում անենք եւ կոնկրետ եզրակացությունների հանգեցնենք, անհրաժեշտ է սեղանին ունենալ տարածքի քարտեզը, ունենալ կնքված պայմանագիրը: Հիմա մենք դատողություններ ենք անում ըստ լսածի, ըստ շրջանառվող խոսակցությունների: Եթե հավաստի լինենք այդ խոսակցություններին, ապա կարծեցյալ հանքավայրը համայնքի վարչական տարածքում է եւ չի մտնում ազգային պարկի մեջ: Առայժմ մի բան կարող են որոշակի ասել՝ լուրջ ռիսկեր պարունակող ծրագիր է, պետք է փորձագետների մասնակցությամբ հանրային քննարկումներ անցկացնել: Խոսքը, ի վերջո, Մեղրու եւ Ազարակի ամբողջ ջրահավաք ավազանի մասին է, խոսքը տարածաշրջանի բացառիկ բնաշխարհի ու կենդանական աշխարհի մասին է: Նաեւ պետք է ճշտել՝ խոսքը հետախուզական աշխատանքների մասին է տակ, թե՞ նաեւ արդյունահանման»:

Վասիլ Ալեքսանյան. «Ահա հանքուղիները (նա ձեռքով ցույց է տալիս - Ս.Ա.), որտեղ պիտի աշխատեն չհնարվածները: Այի քանի մետր է են մաքրման կայանից, եւ վանքից: Եթե այդ ծրագիրն իրականություն դառնա, ապա վանքն ու մաքրման կայանը չեն կարող իրենց տեղում մնալ: Իսկ եթե հանքավայրն առավել 3-5կմ շառավղի պիտի ունենա, ինչպես ասում են, ապա ջրահավաք ավազանը չի կարող այլեւս մաքուր ջրի սնուցող լինել: Եթե մի քիչ ներքե էլ (ինչպես գյուղում են ասում) հարստացուցիչ ֆաբրիկա կառուցվի, ապա լուրջ վտանգի կենթարկվի մեր գեղեցիկ բնաշխարհը: Բոլորն ասում են, որ պետությունն է այդպես ուզում: Բա եթե պետությունն է այդպես ուզում, ապա ինչո՞ւ կառավարությունը բացեիքաց, անկեղծ չի ասում, թե ինչի մասին է խոսքը...»:

Այնուհետեւ փորձեցինք իմանալ Մեղրու եւ Ազարակի քաղաքապետերի կարծիքը խնդրո առարկայի վերաբերյալ:



ԱՐՄԵՆ ԱՎԿԱՅԻՆՅԱՆ
ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար



ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ բնապահպանության նախարար



ՎԱՍՄԱԿ ԳՈՐԴՈՍՅԱՆ
ՀՀ մշակույթի նախարար



Զվարի եկեղեցին (Զվարի վանքից մնացած միակ կառույցը):

Ազարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանն անթույլատրելի համարեց այդ ծրագրի իրագործումը, եթե այն ընդգրկում է Ազարակի խմելու ջրի ջրահավաք ավազանը: Քաղաքապետն էլ, սակայն, ստույգ տեղեկատվության չէր տիրապետում, թե խոսքը կոնկրետ ո՞ր տարածքի է ի՞նչ հանքավայրի մասին է:

Մեղրու քաղաքապետ Սերգեյ Հայրապետյանն ավելի հիմնավոր մտահոգություններ հայտնեց. «Իմ ունեցած տեղեկություններով խոսքն առայժմ միայն հետախուզական աշխատանքների մասին է: Եվ եթե արդյունքները գոհացուցիչ լինեն, ապա հետախուզական աշխատանքներին հաջորդելու է արդյունահանումը: Ըստ էության խոսքը Լիճք եւ Զվար գետերի միջեւ ընկած հողատարածքի մասին է, որը սեփականաշնորհված է եւ պատկանում է գյուղի մի քանի ընտանիքների, որը դեռեւս գյուղացիներից չեն վերցրել: Բայց ինձ ավելի շատ մտահոգում է ոչ թե բուն հանքի շահագործումը, այլ դրա շարունակությունը: Արդյունահանումը ենթադրում է նաեւ հարստացուցիչ ֆաբրիկայի, ուրեմն՝ պոչամբարի կառուցում: Հատկապես պոչամբարը, որքան էլ հազեցած լինի արդիական սարքավորումներով, որոշակի ազդեցություն է ունենալու Մեղրի գետի վրա: Կարող ենք մույնիսկ ստույգ ասել՝ պոչամբարից որոշ հոսքեր՝ մետաղական առանձին բաղադրիչներ պարունակող, հայտնվելու են Մեղրի գետում: Դա նշանակում է, որ Մեղրի գետի ջրերի օգտագործումը, թեկուզեւ ոռոգման նպատակով, դառնալու է խիստ ռիսկային: Դա նշանակում է, որ Մեղրի քաղաքն ու մերձակա գյուղերը ոռոգման համար այլեւս չեն

օգտվելու Մեղրի գետից՝ դրանից բխող հետեւանքներով: Քանի դեռ հանքավայրի ուսումնասիրման եւ շահագործման իրավական հիմքերն ամբողջությամբ չեն ստեղծվել, պետք է կասեցնել այդ ծրագրի կենսագործումը»:

Մի մեղրեցի էլ, որ իր ամուսնը հրապարակելու համաձայնություն չտվեց, հետեւյալ գրույցն արեց. «Ա.թ. հունիսի 5-ին կամ 6-ին տաքսի մեքենայով երեւան էի գնում, ուղեւորներից երկուսը դրսից էիմ անձանոթ: Երկար ճանապարհ էր եւ, բնականաբար, գրույցի բռնկեցից: Նրանցից մեկը, ով առավել ակտիվ էր, երկրաբան էր, ավելի ճիշտ՝ մակշեյդեր: Նա պատմեց, որ 6-7 օր է, ինչ ընկերոջ հետ Մեղրում է, եկել են կանադական-չինական ինչ-որ կազմակերպության հանձնարարությամբ, ոտքով ման եկել Զվարի հանքավայրի ամբողջ տարածքը, որ երկրաբանական փաստաթղթերում Ձիւղարա կամ Ձիւղավայր է կոչվում: Ձրուցակիցս ասաց, որ առաջադրանքը կատարված է՝ գտել են փնտրվող 21-22 հորատանցքը, որ շուտով դրանք շահագործվելու են: Ըստ անձանոթ գրուցակցիս՝ հանքավայրում պղնձի, ոսկու հարուստ պաշարներ կան»:

Այսպիսով՝ թե ինչ է արվում Զվարում եւ թե ինչ է արվելու՝ այդպես էլ պարզ չդարձավ: Առայժմ միայն տարաբնույթ խոսակցություններ են ու ենթադրություններ: Բայց քանի որ խնդրո առարկան շոշափում է գրեթե ամբողջ Մեղրու բնակչության շահերը եւ լուրջ մտահոգություն է առաջացրել շրջանում, ուստի եւ խնդրոն հստակություն մտցնելը շարունակում է օրակարգում մնալ: Եվ քանի որ գյուղապետը, ինչ-ինչ պատճառ-

ներով չարաշահելով իր պաշտոնական դիրքը եւ խոչընդոտելով հրապարակայնությանը, չի ուզում փակագծերը բացել, անկեղծորեն գրուցել իր գլխավորած համայնքի ու շրջանի բնակիչների հետ, ապա ստիպված ենք մեր հարցն ուղղել ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանին, ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանին՝ ի՞նչ է կատարվում (կամ ի՞նչ է նախատեսվում կատարել) Զվարում:

Հերթական անգամ մեզ զարմացրեց ՀՀ մշակույթի նախարարության պահվածքը: Հանրապետությունում ունենալով պատմամշակութային հուշարժաններով զբաղվող երկու-երեք կառույց՝ այդ գերատեսչությունը մինչեւ հիմա չի հստակեցրել Զվարի վանքի պահպանական գոտին: Իսկ հորատանցքերից մեկը (ինչպես նշեցինք) այդ հնավայր-սրբավայրից ընդամենը մի քանի տասնյակ մետրի վրա է գտնվում: Եվ, օգտվելով առիթից, հարց ենք ուղղում նաեւ ՀՀ մշակույթի նախարար տիկին Հասմիկ Պողոսյանին՝ ինչո՞ւ Զվարի վանքի պահպանական գոտին մինչեւ հիմա սահմանված-ճշտված չէ: Իսկ եթե պահպանական գոտին սահմանված-ճշտված չէ, ապա, ներող եղեք, ո՞ր տարածքն են նախարարության աշխատակիցները հսկում: Եվ, այդ ինչպես է պատահում, որ Սյունիքում, արդեն որերորդ անգամ, պատմամշակութային հուշարժանները հայտնվում են ասպատակների ոտնատակին, իսկ մշակույթի նախարարությանը չենք տեսնում ընդդիմացողների, հակադրվողների շարքում...:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրթիռահրետանային զորքերի հիմնադիրը

Գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանի ծննդյան 70-ամյակի առթիվ

Սկիզբ՝ էջ 5

ուսումնասիրելու հրետանու մարտական կիրառման հիմունքները: Գեներալն ակտիվորեն թղթակցել է նաեւ ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ «Հայ զինվորին» եւ նրա էջերում տպագրել հոդվածներ՝ նվիրված հայկական զինուժի ստեղծման ակտիվ գործիչներ, գեներալ-լեյտենանտներ Քրիստափոր Իվանյանի, Հրաչ Անդրեասյանի, հրետանային վարչության առաջին պետ, գնդապետ Անտո Արշակի Տատինցյանի հիշատակին, տվել հարցազրույցներ՝ կարեւոր հիմնահարցերի շուրջ:

Հայրենիքը բարձր է գնահատել գեներալ-մայոր Վ.Հայրապետյանի ծառայությունը հայկական զինուժի կազմավորման, մարտական գործողությունների ժամանակ ցուցաբերած խիզախության եւ խաղաղ շինարարության տարիներին բանակի անձնակազմի ուսուցման եւ մարտունակության բարձրացման գործում՝ նրան պարգևատրելով «Վարդան Մամիկոնյան», «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշաններով, ՀՀ եւ ԼՂՀ «Արիության համար», «Մարշալ Բաղդասյան», «Ծովակալ Իսակով», «Անդրանիկ Օզանյան», «Գարեգին Նժդեհ», «Դրաստամատ Կանայան», «Վազգեն Սարգսյան», «Հայկական բանակի 20 տարին» մեդալներով, խորհրդային մի շարք պարգևներով: 2003թ. հուլիսի 30-ին Կապանի քաղաքապետարանը՝ ռազմական գործողությունների ընթացքում Կապան քաղաքի պաշտպանության գործում ունեցած ծառայությունների համար, գեներալ-մայոր Վ.Հայրապետյանին շնորհել է «Կապան քաղաքի պատվավոր քաղաքացի» կոչում: Բոլորովին վերջերս Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի որոշմամբ գեներալին շնորհվել է նաեւ «Պատվավոր սյունեցի» կոչում:

Օգտվելով առիթից՝ շնորհավորում են իմ համերկարացի եւ ընկեր, գեներալ-մայոր Վ.Հայրապետյանին՝ ծննդյան 70-ամյակի առթիվ, ցանկանում նրան քաջառողջություն ու խաղաղ ծառայություն: Այսօր գեներալ Վ.Հայրապետյանի եւ նրա նման հայրենասերների կողմից ստեղծված մեր պետականության անձնակազմը կառույցներից մեկը՝ հայկական զինուժը, ավելի է հզորացել, դարձել մեր խաղաղության գլխավոր երաշխավորն ու տարածաշրջանի կայունության եւ անվտանգության կարեւոր գործոնը: Փա՛ռք այդ բանակը ստեղծած նվիրյալներին, երիցս փա՛ռք հայ զինվորներին, սպաներին ու գեներալներին, հայրենիքի համար իրենց մատաղ կյանքը գոհաբերած հայրերներին:

ՎԼԻՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պարմական գիտությունների դոկտոր

Նոր հիշատակային մետաղադրամներ



2012թ. հունիսի 25-ից շրջանառության մեջ են մտնում հիսուն դրամ անվանական արծեթով շայաստանի Հանրապետության մարզերին եւ Երեւանին նվիրված (Արարատի մարզ, Արմավիրի մարզ, Արագածոտնի մարզ, Լոռու մարզ, Գեղարքունիքի մարզ, Շիրակի մարզ, Տավուշի մարզ, Կոտայքի մարզ, Սյունիքի մարզ, Կայրոց ձորի մարզ, Երեւան) 2012թ. թողարկման շայաստանի Հանրապետության շրջանառու հիշատակային մետաղադրամները:

Հիսուն դրամ անվանական արծեթով շայաստանի Հանրապետության մարզերին եւ Երեւանին նվիրված 2012թ. թողարկման շայաստանի Հանրապետության շրջանառու հիշատակային մետաղադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց են եւ ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արծեթներով՝ փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց: Հիսուն դրամ անվանական արծեթով 2003թ. թողարկման շայաստանի Հանրապետության մետաղադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների եւ շրջանառության պայմանների փոփոխության:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն «Փայլասար» հիմնադրամի 2011թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Փայլասար» համայնքային զարգացման հիմնադրամ

1.1. Գրանցման համարը՝ 22216030954 1.2. գրանցման ամսաթիվը՝ 20.08.2011թ.

1.3. Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, ք.Կապան, գ. Ագարակ 1.4. Հեռ. 1.5. Բջջ. 093-20-17-951. 6. Կայք 1.7. Էլ.փոստ

2. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ Սվետլանա Խաչատրյան

Սևուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձևը, ստացված օգնության չափը(դրամային արտահայտությամբ)

3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ Մարատ Մարտիրոսյան, Գուրգեն Մարտիրոսյան, Էլզոհա Աբրահամյան, Մարինե Մինասյան, Մանյա Հակոբյան

Սևուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձևը, ստացված օգնության չափը(դրամային արտահայտությամբ)

4. Աշխատակազմը՝

Սևուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձևը, ստացված օգնության չափը(դրամային արտահայտությամբ)

5. Իրականացված ծրագրերի՝

Ծրագրի անվանումը, ծախսված գումարը

6. Ֆինանսական աղբյուրները՝

Սևունը (անվանումը), ծրագրի անվանումը, չափը

7. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝

7.1. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝

8. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի անուն ազգանունը (անվանումը):

9. Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը (թերթերի բանակը) թերթից

Հիմնադրամի տնօրեն՝ Սվետլանա Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ

6 մայիսի 2012թ., Տեղ գյուղ

ԱՇ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 6-ի ընտրությունների կազմակերպման համար Տեղ գյուղում ձեւավորվել էր երկու ընտրական տեղամաս՝ N37/39 եւ N37/40: Երկու ընտրատեղամասում համամասնական ընտրակարգով ընտրողների ընդհանուր թիվը 2874 էր, մեծամասնական ընտրակարգով ընտրողների թիվը՝ 1522: Դա նշանակում է, որ Տեղ գյուղում քվեարկում էր 1352 ժամկետային զինծառայող (ոչ ժամկետայինների սպույգ թիվը չէր կարող ստել):

Ինչ արդյունքներ գրանցվեցին Տեղ գյուղում՝ առանց ժամկետային զինծառայողների:

Համամասնական ընտրակարգ. 1522 ընտրողից քվեարկությանը մասնակցեց 862 հոգի, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցողների 56.6%-ը: 59 քվեաթերթիկ անվավեր համարվեց: Այդպիսով Տեղ գյուղի երկու ընտրատեղամասում ստացվեց 803 վավեր ձայն: Դրանից՝ 334-ի օգտին տրվել է 380 ձայն (47.3%), ԲՀԿ-ի օգտին՝ 268 ձայն (33.4%), ՀՀԳ-ի օգտին՝ 41 ձայն (5.1%), ՀԱԿ-ի օգտին՝ 37 ձայն (4.6%), «Ժառանգության» օգտին՝ 21 ձայն (2.6%), ՀԿԿ-ի օգտին՝ 16 ձայն (2%), ՕԵԿ-ի օգտին՝ 19 ձայն (2.4%): Ստացվում է, որ վավեր 803 ձայնից 423-ը (52.7 %) տրվել է ոչ ՀՀԿ-ի օգտին:

Մեծամասնական ընտրակարգ. 1522 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 981 հոգի(64.5%): 42 քվեաթերթիկ համարվել է անվավեր եւ վավեր ձայների թիվը կազմել է 939: Դրանք բաշխվել են հետևյալ կերպ՝ Հայկ Գրիգորյանին՝ 807 ձայն (86%), Սամվել Հարությունյանին՝ 52 ձայն (5.5%), Թաթուլ Հակոբյանին՝ 40 ձայն (4.3%), Կարազառ

Կարազարյանին՝ 29 ձայն (3.1%): Հայկ Գրիգորյանը հաղթանակ է տարել Տեղ գյուղում, բայց նրա օգտին քվեարկած մոտ 500 հոգին չեն քվեարկել հօգուտ ՀՀԿ-ի:

Անշուշտ, Տեղ գյուղի քվեարկության արդյունքները հետաքրքիր են մի քանի առումով: Նախ՝ Տեղ գյուղը ՀՀ նախագահի նախնիների գյուղն է, եւ մարդիկ օրինական հպարտություն են ապրում դրա համար: Երկրորդ՝ եւ Գորիսում, եւ մայրաքաղաքում կան ծագումով Տեղ գյուղացի բազմաթիվ իշխանավորներ, ովքեր նախընտրական շրջանում ակտիվորեն գործում էին եւ Գորիս քաղաքում, եւ Տեղ գյուղում՝ ՀՀԿ-ի բացարձակ հաղթանակն ապահովելու համար: Ավելին, դրանք մարդիկ էին, ովքեր իրենց իրավունք էին վերապահում կասկածել ուրիշների գործունեության վրա, գնահատականներ տալ ուրիշներին: Բայց...

ՀՀԿ-ն համամասնական ընտրակարգով Տեղ գյուղում ստացավ գրեթե այնքան ձայն, որքան կազմում էր այդ կուսակցության՝ հանրապետությունում ստացած ձայների միջինը (տոկոսային արտահայտությամբ): Ընտրողների ակտիվությունն էլ սովորական էր. համամասնական ընտրակարգով քվեարկությանը մասնակցեց ընտրողների 56.6%-ը, մեծամասնականով՝ 64.5%: Տարօրինակն այստեղ մեծամասնական եւ համամասնական ընտրակարգերով քվեարկությանը մասնակցածների քվեի նման տարբերությունն էր: Թե ինչու Տեղ գյուղում այդպիսի արդյունքներ արձանագրվեցին՝ կարելի է տարբեր ենթադրություններ անել: Բայց կա մի ենթադրություն, որ առավելագույնս ճշմարտամոտ է: Տեղ գյուղի ընտրողները չգեղարկեցին ՀՀԿ-ով, եւ՝ ոչ Մեր Սարգսյանի պատճառով: Տեղ գյուղացիները, ըստ էության, վերապահ վերաբերմունք արտահայտեցին նախկինառաջ

տեղական իշխանությանը եւ այն համագյուղացիներին, ովքեր Գորիսում եւ Երեւանում պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում եւ փորձում էին իրենց հեղինակությամբ փայլուն հաղթանակ ապահովել հայրենի գյուղում: Այդ պաշտոնյաները, մեղմ ասած, չստացան համագյուղացիների բացարձակ աջակցությունը: Ինչ վերաբերում է ՀՀԿ-ի գործիքներին՝ Տեղ գյուղում չտարբերվեց, ապա կարելի է ստույգ արձանագրել, որ այդ շտաբը Տեղ գյուղում գլխավորապես զբաղված էր ՀՀԿ-ի մեծամասնական թեկնածուի գործերով՝ երկրորդ պլան մղելով համամասնական ընտրակարգի խնդիրները, այսպես այդքան տարբերություն չէր լինի ՀՀԿ-ի եւ ՀՀԿ-ի մեծամասնական թեկնածուի ստացած ձայների միջեւ:

Նման եզրակացությունների հիմք հանդիսացող վիճակագրությունը, այդուհանդերձ, կարող է մեկ խոցելի տեղ ունենալ: Ուստի կարող են ուղղակի հարցնել՝ իսկ ո՞վ է առում, որ զինվորականները միահամուռ քվեարկել են ՀՀԿ-ի օգտին: Տեսականորեն ճիշտ հարցադրում է: Բայց բոլոր փորձագետները միաբերան կարծում են ու հայտարարում, որ ժամկետային զինծառայողները քվեարկել են իշխող քաղաքական ուժի օգտին: Իսկ եթե տիրապետող այդ կարծիքը չենք ուզում տարածել Տեղ գյուղի վրա, ապա պետք է մյուս ծայրահեղությունները ընդունել՝ զինվորականության զգալի մասը Տեղ գյուղում դեմ է քվեարկել ՀՀԿ-ին:

Այս կարգի վերլուծությունների կարիքը չէր լինի, եթե որոշ մարդիկ ուրիշների մասին բամբաստուց ու հայրենիքի մասին կենցաղներ խմելուց առաջ կանգնեին հայելու առաջ եւ շատ ուշադիր հայացք ձգեին սեփական բոյբոսաքին եւ սեփական գործունեությանը՝ մերօրյա ու հնօրյա:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

KPMG Armenia office
8th floor, Erntsub Plaza Business Center, 26/1 Vazgen Sargsyan Street, Yerevan 0010, Armenia

Քիչ-Փի-Է-Տի-Սի-Լի-Սի-Սի-ՓԲԸ
4th floor, Erntsub Plaza Business Center, 26/1 Vazgen Sargsyan Street, Yerevan 0010, Armenia

Telephone: +374 (10) 566 762
Fax: +374 (10) 566 762
Internet: kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Ագարակի պղնձ-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
Տնօրենների խորհրդին

Կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2011թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և պատրաստման հիմունքները, պատրաստվել են «Ագարակի պղնձ-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») 31 դեկտեմբերի 2011թ. դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Մենք արտահայտել ենք անվերապահ դրական կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ 2012թ. մարտի 5-ի մեր աուդիտորական եզրակացությունում: Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում այն դեպքերի ազդեցությունը, որոնք տեղի են ունեցել նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ մեր եզրակացության ստորագրման ամսաթվից հետո:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտմանները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների դիտարկումը չի փոխարինում Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների դիտարկմանը:

Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ հիմք ընդունելով այն ընթացակարգերը, որոնք իրականացվել են Աուդիտի միջազգային ստանդարտ 810 «Եզրակացության ներկայացում ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ» պահանջների համաձայն:

«Քիչ-Փի-Է-Տի-Սի-Լի-Սի-Սի-ՓԲԸ»-ի գրասենյակը համաձայն գրանցված է KPMG Europe LLP-ի կողմից կլիանտի ընտանիքին, ընթացակարգերով KPMG International Cooperative («KPMG International») կազմակերպության անդամակցելով «Քիչ-Փի-Է-Տի-Սի-Լի-Սի-Սի-ՓԲԸ»-ի կողմից կազմակերպված:

Եզրակացություն

Մեր կարծիքով, Ընկերության 31 դեկտեմբերի 2011թ. դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա պատրաստված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, հետևողական են նշված ֆինանսական հաշվետվությունների հետ՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

Սվետլանա Խաչատրյան
Տնօրեն
KPMG Armenia office

Ֆիգորան Գասպարյան
Աուդիտի բաժնի ղեկավար

«Քիչ-Փի-Է-Տի-Սի-Լի-Սի-Սի-ՓԲԸ» ՓԲԸ
17 ապրիլի 2012թ.

«Ազարակի պրծնա-մոլորեղենային կոմբինատ» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Table with 3 columns: հազ. դրամ, 2011թ., 2010թ. Rows include Ակտիվներ, Վարչական միջոցներ, Ոչ նյութական ակտիվներ, Զեղչված և գնահատման ակտիվներ, Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով, Ոչ ընթացիկ ակտիվներ, Պաշարներ, Պաշարներ - պատրաստի արտադրանք, Տրված փոխառություններ, Անտրական և այլ դրեխտորական պարտքեր, Ընթացիկ հարկային ակտիվներ, Գրանցված միջոցներ և դրանց համարժեքներ, Ընթացիկ ակտիվներ, Ընդամենը ակտիվներ, Մեխական կապիտալ, Բաժնետիրական կապիտալ, Պատասխան, Զբաղված շահույթ, Ընդամենը սեփական կապիտալ

Table with 3 columns: հազ. դրամ, 2011թ., 2010թ. Rows include Պարտավորություններ, Վարկեր և փոխառություններ, Հետաձգված հարկային պարտավորություններ, Տեղանքի վերականգնման գծով պահուստ, Ոչ ընթացիկ պարտավորություններ, Վարկեր և փոխառություններ, Անտրական և այլ դրեխտորական պարտքեր, Ընթացիկ պարտավորություններ, Ընդամենը պարտավորություններ, Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-րդ էջում ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

Table with 3 columns: հազ. դրամ, 2011թ., 2010թ. Rows include Հասույթ, Վաճառքի ինքնաժողով, Համախառն շահույթ, Այլ եկամուտ, Իրացման ծախսեր, Վարչական ծախսեր, Այլ ծախսեր, Գործառնական գործունեությունից արդյունքներ, Ֆինանսական եկամուտ, Ֆինանսական ծախսեր, Ջուտ ֆինանսական ծախսեր, Զուտ ֆինանսական ծախսեր, Ծախույթ նախքան շահութահարկով հարկումը, Ծախույթահարկի գծով ծախս, Տարվա շահույթ

Table with 3 columns: հազ. դրամ, 2011թ., 2010թ. Rows include Այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի, Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ՝ առանց շահութահարկի, Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2012թ. ապրիլի 17-ին:

Սերգեյ Պետրովսկին
Գլխավոր տնօրեն



Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-րդ էջում ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

Table with 5 columns: հազ. դրամ, Բաժնետիրական կապիտալ, Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ, Զբաղված շահույթ, Ընդամենը. Rows include Մնացորդ առ 1 հունվարի 2010թ., Ծախույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար, Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2010թ., Մնացորդ առ 1 հունվարի 2011թ., Ընդամենը համապարփակ եկամուտ, Տարվա շահույթ, Այլ համապարփակ եկամուտ, Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի աճ պայմանավորված անդրերի վերականգնման գծով պահուստի միջոցով՝ առանց 35,198 հազար դրամ հետաձգված հարկի, Ընդամենը այլ համապարփակ եկամուտ, Ընդամենը այլ համապարփակ եկամուտ տարվա համար, Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2011թ.

Մեխական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-րդ էջում ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

Table with 3 columns: հազ. դրամ, 2011թ., 2010թ. Rows include Գրանցված միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից, Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ, Այլ հոսքեր, Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ նախքան հարկերի և առկա մեկնումների վճարումը, Կտրված շահութահարկ, Կտրված տուկոսներ, Գործառնական գործունեությունից ստացված գույքի դրամական միջոցներ, Գրանցված միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից, Հիմնական միջոցների ձեռքբերում, Ավելացումներ հետախուզման և գնահատման ակտիվներին, Տրված փոխառությունների մարում, Ստացված տուկոսներ, Ներդրումային գործունեությանը օգտագործված գույքի դրամական միջոցներ, Գրանցված միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից, Հոսքեր վարկերից և փոխառություններից, Վարկերի և փոխառությունների մարում, Ֆինանսավորման գործունեությանը ստացված (օգտագործված) գույքի դրամական միջոցներ, Գրանցված միջոցների և դրանց համարժեքների գույքի մեկնում, Գրանցված միջոցների և դրանց համարժեքներից առ 1 հունվարի, Արտադրանքի փոխադրման փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա, Գրանցված միջոցների և դրանց համարժեքներից առ 31 դեկտեմբերի

Գրանցված միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-րդ էջում ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

«Ազարակի պրծնա-մոլորեղենային կոմբինատ» ՓԲԸ
2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություն

1 Պատրաստման հիմունքներ

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Ազարակի պրծնա-մոլորեղենային կոմբինատ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ «Ընկերություն») 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ առողջագրված 2012թ. մարտի 5-ին: Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և ներառում են միայն ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2011թ. և հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք վերցվել են առողջագրված ֆինանսական հաշվետվությունների 5-ից 8-րդ էջերից՝ առանց որևէ փոփոխության: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում առողջագրված ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները: Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կարող են արամադրվել ըստ պահանջի ԸՆԿԵՐՈՒՄԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱՎՈՐՈՒՄԻ, Սյունիքի մարզ, Ազարակ 3403, Գ. Ն. Օղեկի 7):

Լուրեր

ՉՅՍ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը հունիսի 20-ին այցելեց Մեղրու տարածաշրջանում տեղակայված սահմանապահ զորամասեր, հանդիպեց Մեղրու տարածաշրջանի սահմանին հերթապահություն իրականացնող զինծառայողների հետ, հետաքրքրվեց նրանց առօրյայով: Մարզպետի այցի հիմնական նպատակը զինվորներին տեսակցելն էր, նրանց հետ շփվելը եւ ծանոթություն պայմաններին ծանոթանալը:

ՉՅԿ Սիսիանի եւ Կապանի կառույցները հստակեցրել են իրենց պահվածքն այդ համայնքների ղեկավարների՝ ս.թ. սեպտեմբերի 9-ին կայանալիք ընտրություններում: ՉՅԿ Սիսիանի խորհուրդը Սիսիանի քաղաքապետի պաշտոնում ցանկանում է տեսնել Սամվել Թանգյանին, ով ներկայումս Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետն է: ՉՅԿ Կապանի խորհուրդն էլ մարզկենտրոնի ղեկավարի պաշտոնում ցանկանում է տեսնել Աշոտ Չայրապետյանին՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի Կապանի մասնաճյուղի տնօրենին: Հանրապետականի սիսիանյան եւ կապանյան կառույցներում սույն առաջադրումներն ընդունվել են ոչ միանշանակ:

Սյունիքյան այցերից մեկի ժամանակ ՉՅ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Արմեն Գեորգյանը հայտարարել էր, որ արդեն պատրաստ է համայնքների խոշորացման սյունիքյան մոդելը: Խոսք կար նաեւ, որ այն ներդրվելու է այս գարնանը: Այդ մոդելի մասին հանրությանը շատ բան հայտնի չէ: Սյունիքի մարզպետարանի վարչության պետ Սեյրան Ավետիսյանից տեղեկացանք, որ համայնքների խոշորացման սյունիքյան մոդելի հիմնական գաղափարն այն է, որ Մեղրու տարածաշրջանի Կուրիս, Գուղեմնիս, Վահրավար գյուղերը կդառնան մեկ համայնք, կմիավորվեն նաեւ Սիսիանի Թասիկ եւ Թանահատ գյուղերը: Փաստաթուղթը կազմվել է 2009 թվականին՝ Սյունիքի մարզպետարանի առաջարկությամբ: Սակայն, ըստ Սեյրան Ավետիսյանի, այժմ հնարավոր չէ իրականացնել համայնքների խոշորացման ծրագիրը, բանի որ պետք է նախ՝ փոփոխություններ անել համապատասխան օրենքում, ապա՝ սկսել խոշորացման ծրագրի իրագործումը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում ներկայումս քննվում է երկու գործ՝ կապված Սիսիանի քաղաքապետարանի պատասխանատուների հետ: Փոխքաղաքապետ Աշոտ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՉՅ քրեական օրենսգրքի հոդված 308-ի առաջին մասով: Ըստ մեղադրանքի՝ Սիսիանի համայնքի ղեկավարի տեղակալը, օգտագործելով իր պաշտոնական դիրքը եւ լիազորությունները, ծառայության շահերին հակառակ, 11255000 դրամի վնաս է պատճառել քաղաքացի Անահիտ Դուկասյանին: Ավելի վաղ նույն հոդվածով մեղադրանք է առաջադրվել քաղաքապետարանի ֆինանսական բաժնի պետ Համիկ Ստեփանյանին: Վերջինիս դատավարությունը, ի տարբերություն փոխքաղաքապետի դատավարության, ընթանում է դեռեւս չպարզաբանված մի շարք հարցերի համապատկերի վրա:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

ՇՉՈՐՍ ԴՎՎԹՅԱՆ.

«Ոչ մի բանաստեղծ փողի հանդեպ այնքան հարգանք չի ունեցել, որքան Սահյանը»

Երկու փարուց քիչ ժամանակ է մեզ բաժանում Համո Սահյանի 100-ամյա հոբելյանից, որ լրանում է 2014թ. ապրիլի 14-ին: Ի՞նչ է արվել եւ ի՞նչ է արվում սիրված քնարերգուի գրական ժառանգությանը կրկին անդրադառնալու գործում, ի՞նչ նորություն է սպասվում Սահյանի բանաստեղծության երկրպագուներին, նրա հիշատակը հավերժացնելու գործում ի՞նչ անելիքներ կան: Այս եւ խնդրո առարկային առնչվող այլ հարցերի շուրջ է գրույցը «Համո Սահյան գիտաճանաչության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր Շչորս Դավթյանի հետ:



Սահյանով հետաքրքրվող գրքում կհանդիպի նրա կյանքին ու գրական գործունեությանը նվիրված մենագրությունների, բոլոր բանաստեղծական ժողովածուների մասին, հայերեն, ռուսերեն եւ այլ լեզուներով, տեղեկությունների: Սահյանի «Годы мои» բառահոդվածում կարդում ենք. Ռուսերեն թարգմանված բանաստեղծությունների ժողովածու, լույս է տեսել 1971-ին Երեւանում, 151 էջ, տպաքանակ՝ 5000, «Հայաստան» հրատարակչություն: Ժողովածուի առաջաբանը գրել է ռուս թարգմանչուհի Ալլա Մարչենկոն, կազմել է Լեոն Մկրտչյանը, թարգմանիչներն են Արսենի Տարկովսկին, Մարիա Պետրովիչը, Նատալյա Գրեբնյովը, Ալլա Մարչենկոն, Բորիս Պաստեռնակը, Տատյանա Սպենդիարովան, Վերա Չվյազինցեան եւ ուրիշներ:

– Բանաստեղծի հոբելյանը մշակույթի ճանապարհին, – ասաց Շչորս Դավթյանը, – նրա գրական ժառանգությանը վերստին անդրադառնալու նպատակով հրատարակել ենք նրա երկերի ժողովածուի բառահատորյակի առաջին գիրքը՝ պատշաճ հրատարակչությամբ, լուսանկարներով: Անդրանիկ հատորն ընդգրկում է «Հայաստանը երգերի մեջ» եւ «Մայրամուտից առաջ» ժողովածուները, երկրորդ հատորի մեջ կլինեն «Քարափների երգեր», «Սեզամ բացվիր», «Կարմիր-կանաչ աշուն», երրորդում՝ «Դաղձի ծաղիկ», «Ինձ բացակա չղնեք» ժողովածուները: Չորրորդ հատորում նախատեսել ենք տպագրել նրա հոդվածները, հարցազրույցները, այլեւայլ արձակ գործեր: Առաջին հատորում գետնդրված է առաջաբան, որում փորձ է արվել հակիրճ ներկայացնել Սահյանի ստեղծագործության բնութագիրը: Բառահատորյակը տպագրվում է պետպատվերի շրջանակում, բայց նախատեսվածն ավելացել է 100 էջով, բացի այդ՝ առաջին հատորը տպագրվել է կոշտ կազմով, հատորում տեղ են գտել լուսանկարներ, ինչը որոշակիորեն ավելացրել է պետպատվերով նախատեսված գումարի չափը: Ուստի խնդրել են Մաքսիմ Հակոբյանին, որ հրատարակվելիք երեք հատորների տպագրության համար չբավարարող գումարը լրացնի:

– Որքանով տեղեկացանք, ընթերցողի սեղանին է դրվել իր նախատիպը չունեցող «Համո Սահյան. հանրագիտարան» բառագիրքը:

– Ինչ վերաբերում է հանրագիտարանին, էթե չեն սխալվում, մեզանում այդպիսի փորձ չի ձեռնարկվել, հանրագիտարանային կառուցվածք ունեցող այս միակտորյակն ընդգրկում է 261 բառահոդված՝ կապված գրողի հետ եւ 100-ից ավելի լուսանկար: Թեմատիկ առումով բառագիրքն ընդգրկում է բառահոդվածներ հայ գրվածքի մեծերի եւ ակամավոր գործիչների մասին, որոնց վաստակը փորձել է գնահատել Սահյանը, տեղ է հատկացված այն գրականագետներին, գրաքննադատներին, թարգմանիչներին, ովքեր խոսք են անել Սահյանի մասին՝ որպես բանաստեղծ, մտածող եւ մարդ:

– Որքանով մենք տեղյակ ենք, դուք նախաձեռնել էիք Սիսիանի մշակույթի կենտրոնի մի հարկաբաժնի ասեմբլե, թե սրահը, վերածել թանգարանի, բայց ինչպես տեսնում ենք, այդ մտադրությունը եւս չի իրականացել:

– Այո, քանի որ բանաստեղծի հայրական տունը չհաջողվեց վերածել տուն-թանգարանի, խնդրեցի Սիսիանի մշակույթի պալատի մի սրահը դարձնել թանգարանային սենյակ, այնտեղ ժողովել բանաստեղծի մասունքները: Մարզպետը մի քանի անգամ Սիսիանի քաղաքապետին համոզարարեց, նա էլ՝ Եսոյ կանան, էգուց կանան, էս կանան, էն կանան, ի վերջո՝ ոչինչ չարվեց: Մի օր էլ քաղաքապետարանի մշակույթի հարցերով պատասխանատուն ինձ գնալուց, թե գնալուց, սրահին տիրություն արեց: Իսկ սրահում ընդամենը մի սեղան եւ պահարան էր: Որպեսզի գործը զլուխ գար, ողջ գույքի հարցն ինքս պիտի լուծեի, ինչը պարտավոր չեմ: Թող համապատասխան պայմաններ ստեղծեն, եւ անհրաժեշտ նյութերը տրամադրեն ու ձեռավորեն սրահը: Բանաստեղծի միայն 80 մեծադիր լուսանկար ունեն, մոտ 600 լուսանկարներ՝ արձանների մեջ, ձեռագրեր, այլ նյութեր, այդ ամենը սիրով կտրամադրեն:

– Տեղյակ ենք նաեւ, որ գրողի միակ գավակը՝ Նաիրի Սահյանը, ով վերջին տարիներին ապրում էր ԱՄՆ-ում, վերադարձել է 2011-ի հունիսին, որ զբաղվի հոր 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներով, բայց ինչպես ասում են՝ խոփը դեմ է առել քարին:

– Նաիրի Սահյանին հատկապես մտահոգում է այն, որ Երեւանում մինչեւ այժմ կանգնեցված չէ Համո Սահյանի հուշարձանը, ոչ էլ կա տուն-թանգարան: Նա ցամակահունի երկրի ղեկավարների հետ քննարկել այդ հարցը, նա փորձել է դիմել հանրապետության նախագահին, վարչապետին, մշակույթի նախարարությունից փորձել է տեղեկանալ, թե ինչ է արվում բանաստեղծի հոբելյանին ընդառաջ: Բայց ամենուր բախվել է անտարբեր վերաբերմունքի, ինչից ներառվածությունը տրամադրություն է առաջադրվում նրա մեջ, պահվածքն ու խոսվածքը դարձել են ագրեսիվ, ինչը հասկանալի կարելի է: Ե՛ւ արհեստաբան ասած՝ Երեւանում եւ էլ են փորձել բանաստեղծի հուշարձանը կերտելու պատվեր չի ստացել: Քառաստորյակը տպագրելու ենք, բայց հոբելյանի հետ կապված մյուս խնդիրները պիտի լուծվեն կառավարական մակարդակով, բայց Երեւանում հուշարձան կանգնեցնելը կատակ գործ չէ, պիտի կարգին արվի, որ չարժանանա մայրաքաղաքում կանգնեցված որոշ

դիսավոր բացում են կազմակերպել: Ցանկանում էինք նրա հայրական տունը վերականգնել, բայց այն ոչ մեկի հաշվեկշռում չկար: Ես հարցի մեջ պարզություն մտցնելու համար եղա անշարժ գույքի կադաստրում, որտեղ այդ կառույցը ներկայացված է որպես Համո Սահյանի տուն-թանգարան, ինչն իրականում գոյություն չունի: Սոցներդությունների հիմնադրանքն էլ ասում է՝ պարզեք այդ տան սեփականության խնդիրը, որ կարողանանք որեւէ գործ ձեռնարկել: Այդպես էլ հարցը մնում է օդից կախված: Իմիջիայլոց, ժամանակին նրա հայրական տան վրա իմ նախաձեռնությամբ մի հարկ է ավելացել, հիմա այդ տունն անտեր-անտիրական է:

– Որքանով մենք տեղյակ ենք, դուք նախաձեռնել էիք Սիսիանի մշակույթի կենտրոնի մի հարկաբաժնի ասեմբլե, թե սրահը, վերածել թանգարանի, բայց ինչպես տեսնում ենք, այդ մտադրությունը եւս չի իրականացել:

– Այո, քանի որ բանաստեղծի հայրական տունը չհաջողվեց վերածել տուն-թանգարանի, խնդրեցի Սիսիանի մշակույթի պալատի մի սրահը դարձնել թանգարանային սենյակ, այնտեղ ժողովել բանաստեղծի մասունքները: Մարզպետը մի քանի անգամ Սիսիանի քաղաքապետին համոզարարեց, նա էլ՝ Եսոյ կանան, էգուց կանան, էս կանան, էն կանան, ի վերջո՝ ոչինչ չարվեց: Մի օր էլ քաղաքապետարանի մշակույթի հարցերով պատասխանատուն ինձ գնալուց, թե գնալուց, սրահին տիրություն արեց: Իսկ սրահում ընդամենը մի սեղան եւ պահարան էր: Որպեսզի գործը զլուխ գար, ողջ գույքի հարցն ինքս պիտի լուծեի, ինչը պարտավոր չեմ: Թող համապատասխան պայմաններ ստեղծեն, եւ անհրաժեշտ նյութերը տրամադրեն ու ձեռավորեն սրահը: Բանաստեղծի միայն 80 մեծադիր լուսանկար ունեն, մոտ 600 լուսանկարներ՝ արձանների մեջ, ձեռագրեր, այլ նյութեր, այդ ամենը սիրով կտրամադրեն:

– Տեղյակ ենք նաեւ, որ գրողի միակ գավակը՝ Նաիրի Սահյանը, ով վերջին տարիներին ապրում էր ԱՄՆ-ում, վերադարձել է 2011-ի հունիսին, որ զբաղվի հոր 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներով, բայց ինչպես ասում են՝ խոփը դեմ է առել քարին:

– Նաիրի Սահյանին հատկապես մտահոգում է այն, որ Երեւանում մինչեւ այժմ կանգնեցված չէ Համո Սահյանի հուշարձանը, ոչ էլ կա տուն-թանգարան: Նա ցամակահունի երկրի ղեկավարների հետ քննարկել այդ հարցը, նա փորձել է դիմել հանրապետության նախագահին, վարչապետին, մշակույթի նախարարությունից փորձել է տեղեկանալ, թե ինչ է արվում բանաստեղծի հոբելյանին ընդառաջ: Բայց ամենուր բախվել է անտարբեր վերաբերմունքի, ինչից ներառվածությունը տրամադրություն է առաջադրվում նրա մեջ, պահվածքն ու խոսվածքը դարձել են ագրեսիվ, ինչը հասկանալի կարելի է: Ե՛ւ արհեստաբան ասած՝ Երեւանում եւ էլ են փորձել բանաստեղծի հուշարձանը կերտելու պատվեր չի ստացել: Քառաստորյակը տպագրելու ենք, բայց հոբելյանի հետ կապված մյուս խնդիրները պիտի լուծվեն կառավարական մակարդակով, բայց Երեւանում հուշարձան կանգնեցնելը կատակ գործ չէ, պիտի կարգին արվի, որ չարժանանա մայրաքաղաքում կանգնեցված որոշ

հուշարձանների ճակատագրին:

– «Համո Սահյան գիտաճանաչության կենտրոնը» յուրաքանչյուր տարվա ապրիլի 14-ին ոգեկոչում է բանաստեղծի հիշատակը, ինչպե՞ս անցավ այս տարվա միջոցառումը:

– Ոչ մեկին հրավեր կամ հրավիրատուն չէինք ուղարկել: Բայց քանի որ այս տարի վերը մշակված երկու գիրքը լույս էին տեսել, բոլոր հեռուստատեսություններին ուղարկեցինք դրանք, գրելով. «Սիրով ձեզ ենք ուղարկում այս գրքերը՝ միաժամանակ հիշեցնելով, որ մեծ բանաստեղծի 98-ամյակը լրանում է ապրիլի 14-ին»: Բայց ոչ բոլոր հեռուստաընկերություններն էին արձագանքել մեր հիշեցմանը: Ավանդույթի համաձայն, այդ օրը եւս հարգանքի տուրք մատուցեցինք նրա հիշատակին՝ Կոմիտասի անվան այգու պանթեոնում՝ նրա շիրմի մոտ: Ով գնահատում է Համո Սահյան բանաստեղծին ու մարդուն, եկել էր խոնարհվելու նրա շիրմին, ասելու, որ բացակա չեն դնում: Իսկ սահյանական դասերն ամենից ավելի այժմեական են մեր օրերում: Չեն դիմանում Հրանտ Մաթեոսյանի խոսքը մեջբերելու գայթակղությանը. «Եվ որովհետեւ հաճախ թափոք ենք առանց դրոշի, եւ ավելի հաճախ առաջնորդվում ենք ուրիշի սրբապատկերներով, Սահյանի գործն էականապես ավելի է կարեւորում»: Ինչեւէ, արարողությունը ներկա էր պոետի որդին, ով նույնպես բանաստեղծություններ է գրում, վերջերս լույս է տեսել նրա բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն, ի դեպ, «Համո Սահյան գիտաճանաչության կենտրոնի» միջոցների հաշվին, մոտ օրերս ընթերցողի սեղանին կդրվի երկրորդը:

– Եվ վերջին հարցը՝ Շչորս Դավթյան գրականագետն ինչպե՞ս է գնահատում մեր ժամանակների գրական ընթացքը: Այսօր ստեղծվում է բարձրարժեք գրականություն:

– Ոչ: Ասեմ՝ թե ինչու: Ի վերջո գրականություն ստեղծում են կոչված անհատները, որոնք նույն այդ գրականության կրողն են: Սենց խորհրդային Սիուրյան ողջ ժամանակաշրջանում ունեցել ենք առաջնորդներ, լիդերներ, որոնք գրական գործընթացը կարողանում էին կանոնակարգել: Եթե մի սկսեցի ստեղծագործող բանաստեղծություն էր գրում, մտածում էր՝ գրածս պիտի կարդար Իսահակյանը, Պարույր Սեւակը, Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Սիլվա Կապուտիկյանը: Ի՞նչն է «բնորոշ» մեր ժամանակներից: Ով ինչ ուզում, գրում է, երբ ցանկանում, տպագրում է: Սա է ամենամեծ խայտառակությունը: Խորհրդային տարիներին գիրք տպելը պետական մենաշնորհ էր, մինչ տպագրելը քո գիրքը մի քանի հոգի պիտի գրախոսեին, հիմա մասնագիտական վերահսկողություն չկա: Իմ գրապահարանում մոտ հարյուրի հասնող բանաստեղծական ժողովածու կա, որոնք ինձ են հանձնել հեղինակները՝ նաեւ ակնկալելով, որ գրավոր կարծիք կհայտնեն: Բայց դա չեն անում: Ես չեմ կարողանում կեղծել, որովհետեւ նրանց գրածների մեջ պոետիկ չկա: Հակառակ դեպքում, էթե մի քանի խոսք ասեմ, գրքույկի հեղինակը կարծելու է, թե ինքն արդեն կայացած բանաստեղծ է, ավելի վատ բաներ է անելու:

Ես ինչո՞ւ եմ երկրպագու Համո Սահյանի բանաստեղծությունը: Քանի որ նրա պոետիկայում մի չհղկված տող չկա: Եթե տեսել է տողը չի բռնում բանաստեղծությանը, հանել, հղկել է, նորից դրել է տեղը: Անկեղծորեն եմ ասում՝ ոչ մի բանաստեղծ տողի հանդեպ այնքան հարգանք չի ունեցել, որքան Սահյանը:

Ջոույց՝ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Եվ ջանքերիդ համար եւ հոգսերիդ բազում
Բանաստեղծն իր սրտի վերջին խոսքն է ասում.

Մեր հայրենակիցը միջազգային մրցույթի դափնեկիր

ՄԵՆԱԿՈՒՅԹ

Մեր թերթի անցյալ տարվա նոյեմբերի 10-ի համարում («Սյունյաց երկիր» N19, 2011թ.) «Եկավ, տեսավ, հիացրեց...» հրապարակման մեջ մենք գրել ենք մեր հայրենակից, միջազգային տարբեր մրցույթների դափնեկիր Զրաչյա Ավանեսյանի կապանյան ելույթի մասին: Այս անգամ ուրախակալի լուր քաղեցինք համացանցից: Իսկ հաջողությունը ուղեկցել էր Զրաչյայի եղբորը՝ թավջութակահար Սեակ Ավանեսյանին, ով հաղթող է դարձել Lions European Musical Competition-ի հեղինակավոր մրցույթում:

Եվրոպական 24 երկրներից յուրաքանչյուրում անցկացվում է տեղական մրցույթ մինչև 26 տարեկան թավջութակահարների միջև, եզրափակիչ փուլում երկիրը ներկայացնելու նպատակով: Երկու ամիս առաջ հայազգի երաժիշտը հաղթել էր Բելգիայի տեղական պայքարում եւ Բելգիան ներկայացնելու իրավունք ստացել: Բոլորովին վերջերս արդեն բոլոր երկրների հաղթողները հավաքվել էին Բելգիայի Տոնգերեն



քաղաքում, որտեղ պայքար ծավալվեց նրանց միջև: Մայիսի 6-ին հաղթողի տիտղոսին արժանացավ Սեակ Ավանեսյանը:

Մինչ այս հաղթանակը Սեակն արդեն մի շարք միջազգային մրցույթներում տարբեր կարգի մրցանակներ ստացել էր, մասնավորապես՝ չորրորդ մրցանակ Ֆրանսիայում, երկրորդ մրցանակ եւ արծաթյա մեդալ Լյուքսեմբուրգում, երկրորդ մրցանակ՝ Բելգիայում:

Վերջերս Սեակի մենահամերգներից մեկին ներկա է գտնվել աշխարհահռչակ թավջութակահար Միշա Մայսկին, որն այնքան էր տպավորվել նրա կատարմամբ, որ հաջորդ օրը անվարձաբար հրավեր անժամկետ Սեակին տրամադրեց Կրեմլնայի ամենանշանավոր թավջութակի վարպետ Գոֆելերի պատրաստած 350 տարեկան մի հրաշալի գործիք, որը գնահատված է 6 միլիոն եվրո՝ նշելով, որ Սեակն արժանի է միայն այս կարգի գործիքի:

Սեակ Ավանեսյանը նվագում է նաև «Ավանեսյան տրիոյում» իր եղբոր՝ ջութակահար Զրաչյա Ավանեսյանի հետ:

Պատրաստեց
ՎԱՐՄ ՕՐԲԵՆՅԱՆԸ

Մեղրեցի դպրոցականը՝ միջազգային օլիմպիադայում



ՀԱՆՐԱՎՐԹՈՒԹՅՈՒՆ

Նանե Քալաշյանը 17 տարեկան է, ապրում է Մեղրիում: 2011-12 ուստարում ավարտել է Մեղրու N1 դպրոցը: Ավարտական դասարանում մասնակցելով գերմաներենի դպրոցական օլիմպիադային՝ հաղթել է եւ անցել մարզային փուլ, որտեղ զբաղեցրել է առաջին տեղը: «Մասնակցելով գերմաներենի դպրոցական օլիմպիադային՝ հաղթեցի եւ աստիճանաբար՝ փուլ առ փուլ, հասա գերմաներենի հանրապետական օլիմպիադային, որտեղ գրավեցի 3-րդ պատվավոր տեղը: Այս գանգահարեցին եւ առաջարկեցին մասնակցել գերմաներենի մեկ այլ մրցույթի: Սկզբում երկմտեցի՝ մասնակցե՞լ, թե՞ ոչ, ապա ծնողներիս հետ որոշեցի, որ գնամ, ուժերս փորձեմ» - ասում է Նանե Քալաշյանը: Նա մասնակցեց Գերմանիայի Գյոթեի անվան ինստիտուտի կազմակերպած մրցույթին, ստացավ արծաթե պատվոգիր եւ հնարավորություն՝ մասնակցելու Մայնի Ֆրանկֆուրտում կայանալիք գերմաներենի միջազգային օլիմպիադային, որին կմասնակցեն 52 երկրի ներկայացուցիչներ: «Երբ ինձ հանձնեցին արծաթե պատվոգիրը, շատ հուզված էի, նույնիսկ՝ լաց եղա: Սկզբում հաղթելու հավանականությունը փոքր էր թվում, բայց հեշտ էր մրցույթը, եւ ես հաղթեցի» - ասում է Նանե: Հարկ է նշել, որ Ֆրանկֆուրտում կայանալիք օլիմպիադային Զայաստանը ներկայացնելու է երկու մասնակից մեկը՝ Նանե Քալաշյանն է Մեղրուց, ով առաջին անգամ է լինելու Գերմանիայում, մյուսը՝ Գեղարքունիքի մարզից է, ով ժամանակավոր ապրել է Գերմանիայում: «Հաղթանակիս համար նախեառաջ պարտական եմ իմ գերմաներենի ուսուցչուհիներին՝ Սուսաննա Դավթյանին եւ Կարինե Ստեփանյանին, որոնց խորին շնորհակալությունս եմ հայտնում», - մեզ հետ զրույցում ասաց Նանե Քալաշյանը, ով քննությունները հաջող հանձնել է ընդունվել է երեւանի պետական տնտեսագիտական համալսարան: Ֆրանկֆուրտ է մեկնելու հուլիսի 2-ին եւ այնտեղ է մնալու մինչեւ հուլիսի 14-ը, այդ ժամանակահատվածում էլ կայանալու է մրցույթը: «Այս անգամ մրցույթը, կարծում եմ, ավելի հետաքրքիր կանցնի՝ տարբեր խմբային աշխատանքներով, խաղերով, պատաստների ձեւավորումով», - ոգևորությունը մեզ հետ կիսեց Նանե: Մեղրու բնակիչները, «Սյունյաց երկիր» խմբագրակազմը հաջողություն են ցանկանում Նանե Քալաշյանին եւ մաղթում հաղթական վերադարձ:

ՍՐԱՎԵՆ ԵՎԱՍՍԱՐՅԱՆ

Ձեռնարկատիրական եւ քաղաքացիական կրթություն՝ դպրոցականներին

ՀԿՆԵՐ

«Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպությունը 2011թ. ապրիլի 1-ից համրապետության ավագ դպրոցներում իրականացնում է «Ձեռնարկատիրական եւ քաղաքացիական կրթություն» ծրագիրը, որի նպատակն է ավագ դպրոցի աշակերտների շրջանում խթանել ձեռնարկատիրական մտածողության եւ քաղաքացիական ակտիվության զարգացումը: Ծրագիրն արտադասարանական է եւ ֆինանսավորվում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից:

Սյունիքի մարզից դրամաշնորհի էր արժանացել Քաջարանի N2 միջն. դպրոցի պատանի բնասերների «Կապուտան» աշակերտական շՊԿ-ն, որը դրամաշնորհային բնապահպանական եւ շրջակա միջավայրի պահպանման ծրագրերի իրախոսում անվանակարգում ընտրվեց որպես հաղթող դպրոց: Ծրագրի նպատակն էր աջակցել Քաջարանի կանաչապատ գոտիների պահպանմանը: Գործընկերներն էին Քաջարանի քաղաքապետարանը եւ «Կեմի» հասարակական կազմակերպությունը: Արդյունքում՝ Քաջարանի կանաչապատ գոտիներում ծառերի եւ թփերի վերաբերյալ ցուցանակներ տեղադրվեցին: Իսկ հունիսի 14-ին «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության աշխատանքային խումբը՝ տնօրեն Արմինե Հովհաննիսյանի գլխավորությամբ, Քաջարանում էր եւ գերազանց գնահատեց կապուտանցիների աշխատանքը:

2011-12թթ. ուստարում շուրջ 100 դպրոց է ընդգրկվել կազմակերպության կողմից իրականացվող այդ ծրագրում: Նախատեսված է 2012թ. սեպտեմբերի 1-ից ծրագրում ընդգրկել եւս 100 նոր դպրոց (9 դպրոց՝ Սյունիքի մարզից):

ԱՆԱԴՆՏ ՍԱՅԱԿՅԱՆ

Քաջարանցի դպրոցականները՝ Գանձասարում



Վերջերս Քաջարան քաղաքի N2 դպրոցի 11-րդ դասարանների աշակերտները հայրենագիտական արշավ էին կազմակերպել դեպի Գանձասարի վանական համալիր: Արշավին մասնակցում էին նաև դասուղեկները, ուսուցիչներ եւ ծնողներ: Դպրոցականներին աջակցել եւ սատարել էր Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեորգյանը: Դպրոցականները չէին կարողանում թաքցնել իրենց ոգևորությունը, որ վերջապես հնարավորություն ունեն տեսնելու այն երկրամասը, որի ազատագրման համար հազարավոր զոհեր ենք տվել: Հայրենագիտական արշավի մասնակիցները նախ կանգ առան Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում, այնուհետեւ շարժվեցին դեպի պատմական Գանձասար: Տեսնելով Գանձասարի հրաշք բնությունը ու անկրկնելի վանքը՝ նրանք կարծիք հայտնեցին.

«Մենք զարմացած, միաժամանակ հիացած ենք այս ամենով: Ճիշտ են ասում, որ ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան տասն անգամ լսել»: Արցախում տեսած ամեն մի խաչ, ամեն մի հուշարձան աշակերտների վրա մեծ տպավորություն էր թողել: Նրանց հետաքրքրությունն այնքան էր շարժվել, որ փորձում էին ամեն մի ժայռի, քարի պատմությունը մանրամասն իմանալ: 11-րդ դասարանի աշակերտ Հայկ Պողոսյանը, ով չկարողացավ թաքցնել զարմանքն ու հիացմունքը, ասաց. «Երբեւիցե չէի եղել Արցախ աշխարհում, ընդամենը գրքերում էի ըմբռնել ու կիմոնկարներ դիտել: Այդ ճանապարհորդությունն ինձ համար մի նոր հայտնություն էր, եւ փառք ու պատիվ այն մարտիկներին, ովքեր իրենց կյանքը զոհեցին Արցախի ազատագրման համար»:

Քաջարանցի Գանձասար


ճանապարհը շատ կարճ թվաց ու հետաքրքիր դարձավ: 11-րդ դասարանցի Գոհար Գեորգյանն ասում է, որ Ղարաբաղի մասին շատ երգեր է երգել, շատ պատմություններ է լսել, բայց երբեք չէր ունեցել այն զգացողությունը, ինչ ունեցավ ու տեսավ Ղարաբաղում: «Երբ հասանք Արցախ ու տեսանք Գանձասարի հրաշք բնությունը, միանգամից հասկացանք, որ Արցախի մասին գրված երգերը շատ տեղին ու ճիշտ են: Այն շքեղությանն ու գեղեցկությանը, արցախցու այն հյուրասիրությանը, որոնց մասին երգվում են մեր երգերում, մենք ակնառատե եղանք», - ասում է Գ.Գեորգյանը:

Հուսանք, որ այսպիսի արշավները շարունակական բնույթ կկրեն, որոնց շնորհիվ էլ մեր աշակերտները կկարողանան ճանաչել իրենց հայրենիքը:

ԶԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Մեղրու կենտրոնական հրապարակը նոր տեսք կունենա

Քաունթերփարթ ինթերնեյշնլի հայաստանյան գրասենյակը 54 համայնքում իրականացնում է տարբեր ծրագրեր, դրանցից մեկը Մեղրիում է: Քաունթերփարթ ինթերնեյշնլի եւ Մեղրու քաղաքապետարանի միջեւ համաձայնություն կնքվել է դեռ նախորդ տարի, իսկ ծրագիրն այժմ արդեն ընթացքի մեջ է: Իրականացվելու է երեք համատեղ ծրագիր, որից մեկը Մեղրու կենտրոնական հրապարակի վերանորոգումն է: Շինարարական աշխատանքները կարժեման մոտավորապես 15 մլն դրամ, որից 6.2 մլն-ը տրամադրել է Քաունթերփարթ ինթերնեյշնլը, իսկ մնացածը՝ Մեղրու քաղաքապետարանը, աշխատանքները իրականացնելու է «Մեղրիչին» ԲԲԸ-ն (տնօրեն՝ Ա. Միրզոյան): Մեղրու կենտրոնական հրապարակը կառուցվել է 60-ականներին եւ մինչ օրս չի վերանորոգվել, մասնակիորեն բարեկարգվել է միայն: Արդեն շուտով այն ունենալու է բոլորովին նոր տեսք, վերին մասում մի քիչ փոքրացվելու է, քանի որ այդ հատվածում ճանապարհը շատ է մեղ ու երբեմն երթեւեկությանը խանգարում է: Հրապարակը սակավապատվելու եւ կանաչապատվելու է, տեղադրվելու են եզրաքարեր, իսկ հուշարձանը եւ նշանավոր ստիւն մնալու են իրենց տեղերում: Վերանորոգման նախագիծը պատրաստ է, եւ աշխատանքներն արդեն



Մեղրու կենտրոնական հրապարակի վերանորոգման աշխատանքները կարժեման մոտավորապես 15 մլն դրամ, որից 6.2 մլն-ը տրամադրել է Քաունթերփարթ ինթերնեյշնլը, իսկ մնացածը՝ Մեղրու քաղաքապետարանը:

սկսվել են: Նույն ծրագրով փոխվելու են նաեւ Մեղրու մշակույթի կենտրոնի դահլիճի աթոռները, իսկ մանկապարտեզում տեղադրվելու են վերապատուհաններ: Նշենք նաեւ, որ այս տարի ավարտվել է Մեղրու Մեծ եւ

Փոքր թաղերն իրար միացնող կամրջի ընդլայնումը, որի համար անհրաժեշտ 40 մլն դրամը հատկացվել էր պետությունից: Նորակառույց կամրջի շնորհիվ հեշտացել է քաղաքի կենտրոնում երթեւեկը, ինչպես նաեւ

իրար են կապվել գետի երկու ափը: Անցած տարեվերջին ավարտին է հասցվել նաեւ մշակույթի կենտրոնի տանիքի վերանորոգումը:
ԱՂԱՎԻՆ ԵՎԱՍՏԱՐՈՅԱՆ

Մատակարար՝ Ա. Նախատարածի

Այուրյաց երկիր

Տ Ա Ս Ե Ր Տ Յ Ա Թ Ե Ր Թ
 Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՅԱՆՅԱՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
 (091) 45 90 47,
 (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնեթ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՐ - ԾԱՆՈՒԹՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այուրյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Տպարանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 28.06.2012թ.:

Հայտարարություն

ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (նախկին մանկավարժական ուսումնարան) հայտարարում է 2012-2013 ուսումնական տարվա ընդունելություն առկա (ստացիոնար) ուսուցմամբ հետեւյալ մասնագիտություններով

N/N	Դաս վիճը	Մասնագիտությունը	Առկա ուսումնառության տեսակները (տարի)		Որակավորումը	Տարեկան ուսման վարձը (դրամ)	Մրցութային համարվող առարկաներն ընդունելության ժամանակ			Ընդունելության բնական առարկաները	Քննության օրը, ժամը, վայրը եւ տեսակը				Մրցութի օրը
			Հիմնական ընդհանուր կրթության հիմքով	Միջնակարգ (տրիվ) ընդհանուր կրթության հիմքով			1	2	3		Օրը	Ժամը	Վայրը	Տեսակը	
Մասնագիտություններ՝ ըստ միջին մասնագիտական կրթական ծրագրերի															
1	0301	Հայոց եւ օտար լեզուների դասավանդում	-	4	Հայոց եւ օտար լեզուների ուսուցիչ	94000	Հայոց լեզու եւ գրականություն	Օտար լեզու	Մաթեմատիկա	-	-	-	-	-	Օգոստոսի 26-27
2	0307	Ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ	-	3	Ֆիզիկուլտուրայի ուսուցիչ (մարզիչ)	94000	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	Ֆիզիկուլտուրա	21 օգոստոսի 2012թ.	9:00	Գորիսի պետական քոլեջ	Մասնագիտական	Օգոստոսի 26-27
3	0313	Նախադպրոցական կրթություն	-	2	Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակ	94000	Հայոց լեզու եւ գրականություն	Մաթեմատիկա	Հայոց պատմություն	-	-	-	-	Օգոստոսի 26-27	
4	0402	Մանկաբարձական գործ	4	3	Մանկաբարձ	120000	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	Կենսաբանություն	22 օգոստոսի 2012թ.	9:00	Գորիսի պետական քոլեջ	Բանավոր	Օգոստոսի 26-27
5	0405	Դեղագործություն	3	2	Դեղագործ	120000	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	Կենսաբանություն	22 օգոստոսի 2012թ.	9:00	Գորիսի պետական քոլեջ	Բանավոր	Օգոստոսի 26-27
6	0406	Քույրական գործ	4	3	Բուժքույր	120000	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	Կենսաբանություն	22 օգոստոսի 2012թ.	9:00	Գորիսի պետական քոլեջ	Բանավոր	Օգոստոսի 26-27
7	2203	Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	-	3	Տեխնիկ	110000	Մաթեմատիկա	Ֆիզիկա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-	-	Օգոստոսի 26-27	
Մասնագիտություններ՝ ըստ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի															
1	2304	Վարսավիրական արվեստ եւ զարդային դիմահարդարում	-	1	Վարսահարդար	անվճար	Երկրաչափություն	Կենսաբանություն	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-	-	-	Օգոստոսի 26-27
2	2907	Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ	3	-	Հյուսն, ատաղձագործ	անվճար	Երկրաչափություն	Մաթեմատիկա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-	-	-	Օգոստոսի 26-27

Ծանոթություն՝ Ընդունելության կարգին առնչվող հարցեր լինելու դեպքում դիմել ընդունող հանձնաժողովին: Մեր հասցեն՝ Գորիս, Ավանգարդ 4, Էլ. փոստ՝ lazaryankaren@rambler.ru, Կայք՝ http://gorispetcollege.do.am
 Հեռախոսահամարներ՝ (0284) 2-01-85, 2-28-42, (095) 80-80-40, (099) 96-95-60, (093) 26-80-36



ԱՐՑԵՔՆԵՐ

Աշոտ Ավագյանի հրաշալի «Ժառանգը»



ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Ավագյանն արտակարգորեն լավ ավանգարդիզմի ոճի արվեստագետ է: Նրա մտահայեցողության սահմաններն անվերջ են: Մշակութային կյանքով եռուն կենտրոնից՝ Երեւանից հեռու գտնվելով, Ավագյանը կարողանում է ստեղծագործել, արարել ու զարմացնել իր ստեղծագործություններն ուսումնասիրողներին, դիտողներին: Նա այսօր ունի բազմաթիվ գործեր, 100-ից ավելի ժայռապատկերներ, որոնք գտնվում են հայրենի բնօրրանում՝ Սիսիանում: Նկարիչը ստեղծագործում ու դասավանդում է Սիսիանի Ձախար Խաչատրյանի անվան զեղարվեստի դպրոցում: Ստեղծված նրա դասարանը՝ միանգամից տպավորություն է ստանում, որ ստեղծագործող, արարող մարդն ամբողջովին տարբերվում է հասարակ մահկանացուից: Դասարանում տեսանք մի քանի կտավներ, որոնց վրա պատկերված էր Մետրոպ Մաշտոցն իր աշակերտների հետ: Հենց այդ նկարներից էլ սկսվեց մեր հա-

ճելի ու հետաքրքիր զրույցը արվեստագետի հետ: «Մատենադարանի նոր մասնաշենքում այս նկարներից մեկն արդեն ցուցադրում են, իսկ մնացածները, ինչպես որոշեցին, դեռ պետք չէ», – ասում է Ա. Ավագյանը: Մատենադարանի նոր մասնաշենքի նախագծի հեղինակ, ճարտարապետ Արթուր Մեսչյանը շատ նկարիչների է ճանաչում, շատերի աշխատանքներն է հավանում, բայց երկար խորհելուց հետո որոշել է, որ Մաշտոցն իր աշակերտների հետ պատկերող կտավն ավելի հաջողված կվրձնի սիսիանցի արվեստագետ Աշոտ Ավագյանը: Նկարիչն ասում է, որ չորս տեսակի առաջարկություն է արել ճարտարապետին՝ առաջինը՝ արտարկտ, երկրորդը՝ ռեալիստական, երրորդը՝ հին հայկական քանդակագործություն, չորրորդը՝ մանրանկարչություն ժանրում: Առաջարկված տարբերակները երկար քննարկելուց հետո որոշեցին, որ ավելի հարմար տարբերակը մանրանկարչությունն է: Մատենադարանի նոր մասնաշենքում ցուցադրված կտավը ժանրային առումով պաննո է (կտավ, յուղաներկ), չնայած որ ի սկզբանե նախատեսված էր որմնանկար: Նախապես որոշված էր յոթ պաննո դնել նոր մասնաշենքում, բայց ստացվեց այնպես, որ դրվեց ընդամենը մեկը: «Աշակերտներին պատկերել են մեր նշանավոր մարդկանց դեմքերով՝ Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի և ուրիշներ: Պաննոն ի տես ենք դրել անցած տարվանից. մեծամտություն չլինի, բայց շատ են եղել արձագանքները, նկարը մասնագետները շատ բարձր են գնահատել»: Արվեստագետը պատմում է, որ սկզբնական շրջանում շատ էր մտածում նկարի մասին, քանի որ ինը մետրանոց գործ երբեմից չէր ստեղծել: «Սկզբնական շրջանում էսքիզներ են արել, մտածել են նույնիսկ, որ գուցե ավելի նպատակահարմար է հրաժարվել: Կարծես թե մեջք վախի ու պատասխանատվության զգացումները միախառնվել էին: Նախ փորձեցի մեջք հարթահարել վախի զգացումը և,



Աշոտ Ավագյանի հեղինակած Ջորաց քարի նմանակը



վատահորեն հավատալով ուժերիս, կարողացա պատկերել այն ամենը, ինչ ցանկանում էր տեսնել ճարտարապետը»: Նկարի կարծիքով Մետրոպ Մաշտոցն այսօր շատերի համար գաղափար է դարձել, այլ ոչ մարդկային կերպար: Շատերը Մաշտոցին պատկերացնում են իրենց երեակայությանը: Աշոտ Ավագյան արվեստագետի աշխատանքները ցուցադրվել են բազմաթիվ անհատական ցուցահանդեսներում: Նրա գործերով շատերն են հետաքրքրվել, շատերն են հիացմունք արտահայտել: Արվեստագետն առաջիկայում պատրաստվում է հերթական անհատական ցուցահանդեսին ԱՄՆ-ում: Ասում է, որ ցուցահանդեսին կտանի մոտ 40 գործ: Հիմնականում փոքր կտավներ, որպեսզի ճանապարհին դժվարություններ ու բարդություններ

«Մաշտոցն և իր աշակերտները» գործը նոր մասնաշենքի դահլիճում:



չառաջանան: Հենց նրա նախածեռնությամբ է տարիներ առաջ ստեղծվել Ջորաց քարերի նմանակը, որը բազմաթիվ քննադատությունների տեղիք է տվել, շարժել շատերի դժգոհությունը: Մարդիկ ասում էին, որ Ջորաց քարերի անհարկի և անհաջող կրկնօրինակումն է: «Այնտեղ միայն առաջին հայացքից է երևում, որ նույն Ջորաց քարերն են, բայց հետո, երբ խորանում ես ուսումնասիրում ես, հասկանալի է դառնում, որ կրկնօրինակված ոչինչ չկա: Եվ որպեսզի տարիներ հետո մեր թոռներն ու ժոռները շփոթության մեջ չընկնեն, այդ քարերը ես հատուկ ստեղծել եմ՝ մտցնելով տարբերություն ժամանակակիցի և հին միջև»: Վարպետը երբեմն փորձում է ստեղծել այնպիսի պատկերներ, որոնք կտավի վրա հնարավոր չէ ամբողջովին արտացոլել և դուրս է գալիս կտավի սահմաններից, արարում նոր գործեր: Կեղծ Ջորաց քարերի ստեղծումը վարպետի համար ուղղակի էքսպերիմենտ էր: Նա նույնիսկ քարերի վրա իծագրեր է քանդակել, որ Ջորաց քարերի հետ նմանեցնելու կամ նույնացնելու կարիք չլինի: Յուրաքանչյուր քարի վրա քանդակված իծագրերն ունի հստակ ասելիք: «Մարդիկ քաղաքի կենտրոնում հողատարածք են գնում՝ խանութ սարքելու նպատակով, իսկ ես այդ սարը գնել եմ ավելի հաճելի վայր դարձնելու համար: Ամեն ինչ օրինական եմ արել, որպեսզի խուսափեմ ավելորդ խոսակցություններից»: Վարպետի արհեստանոցն իր հարազատ օջախն է, որտեղ կարողանում է վրձնի միջոցով արտացոլել կյանքն իր բոլոր շերտերով ու գույներով, արցունքով ու ժպիտով, մռայլ ու պայծառ եղանակով: Չնայած որ այսօր բոլորիս է հայտնի, որ մերօրյա նկարիչներից շատերն ապրում են շատ սուղ ու անբարենպաստ պայմաններում, այնուամենայնիվ, չեն բողոքում. «Ես չեմ բողոքում իմ ապրուստից, որովհետև ես եմ ընտրել իմ ճանապարհը, ուղղակի պետք է չտրտնջամ, այլ հարմարվեմ»: Հուսանք, որ այլուցեցիներից շատերը Մատենադարանի նոր մասնաշենք այցելելիս ուշադրություն ես կդարձնեմ Աշոտ Ավագյանի կտավին և հոգու խորքում հպարտություն կպարտեմ, որ նկարի հեղինակն իրենց հայրենակիցն է:

ԶԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ

ԳԱՌՆԻԿ ՅՈՎԱԿԻՄՅԱՆ. «Մատենադարանը նաեւ սիսիանցիներով ենք կառուցել»

Սկզբը՝ էջ 2

Կը միլիոնը տրամադրել է բարերար Սերգեյ Յամբարձումյանը, իսկ նոր մասնաշենքի կառուցման համար 3 մլն 540 հազար ամերիկյան դոլար, գլխավոր մասնաշենքի վերակառուցման եւ հարակից տարածքների վերաշինման համար 2 մլն 230 հազար ամերիկյան դոլար՝ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գործադիր տնօրեն Մաքսիմ Յակոբյանը:

2011-ի սեպտեմբերի 20-ին՝ անկախության 20-ամյակի նախօրեին ՀՀ եւ ԼՂՀ նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Բակո Սահակյանի, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաքինի, արտասահմանցի հեղինակավոր հայագետների եւ պատվավոր հյուրերի մասնակցությամբ տեղի ունեցավ Մատենադարանի նոր գիտական համալիրի բացման հանդիսավոր արարողությունը:

«Մատենադարանը մեր ամեն ինչն է՝ լեզուն, գրականությունը, պատմությունը, գիտությունը, ծննդյան վկայականն ու կենսագրությունը, մեր մշտական ու հարատև մեկնակետը, – ասել է հանրապետության նախագահը եւ հավելել, – շնորհակալ եմ ճարտարապետներին եւ շինարարներին, ովքեր գտել են լավագույն լուծումները եւ իրենց մտքի ու բազկի ուժով, իրենց քրտինքով ու նվիրված աշխատանքով օժեղ են այս շինության յուրաքանչյուր քարը»:

Շնորհակալություն հայտնելով նոր համալիրի ճարտարապետին՝ Արթուր Մեսչյանին, նախագահն ասել է, որ այդ կառույցով նա դարձել է 20-րդ դարի հայ ճարտարապետության փայլուն ներկայացուցիչ Մարկ Գրիգորյանի արժանի ժառանգորդն ու յուրատեսակ գործընկերը՝ շարունակելով նրա ստեղծած գործը եւ հավատարիմ մնալով նրա ստեղծած շենքի ոգուն ու տրամաբանությանը: Եվ ամեն ինչ սրանով չավարտ-



Երեւան, Արամ խաչատրյանի փուն-թանգարանի կամարաշարը



վեց: Ինչպես տեղեկացնում է Գառնիկ Յովակիմյանը, 2011-ի նոյեմբերից սկսվեց շինարարության երկրորդ փուլը, նրա ղեկավարած ընկերությանը վստահված տեղամասի արժեքը կազմեց 300 մլն դրամ: Մինչեւ այս տարվա ապրիլն ընդգրկող ժամանակահատվածում իրականացվել են դեպի Մատենադարան տանող ճանապարհի եւ գլխավոր մասնաշենքի առջեւի երկու հարթակների վերակառուցումը, դեպի գլխավոր մասնաշենք տանող ճանապարհի կապիտալ վերանորոգումը, սիզամարգերի ձեւավորումը, հենապատերի կառուցումը, ամեն, ամեն ինչ: «Ողջ ձմեռը աշխատեցինք, ճիշտ է, ծախսատար էր այդ եղանակին գործ անելը, բայց հետևում էինք տեխնոլոգիաներին, որ աշխատանքի որակը չտուժի: Քիչ բան է մնացել անելու, այն է՝ շենքի ներսում, մինչեւ հունիսի 15-ը հավանաբար ավարտված կլինի ամեն ինչ»: Ձրուցակիցս մեջբերում է նաեւ Արթուր Մեսչյանի ձեւակերպումը. «Մատենադարանն սկսվում է Մաշտոցի պողոտայից»: Ի դեպ, այս տարվա ապրիլի 22-ին հենց Մատենադարանի գլխավոր մասնաշենքի մերձակա հարթակից մեկնարկեց Երեւանը գրքի համաշխարհային

մայրաքաղաք հռչակելուն նվիրված տոնախմբությունը:

– Ի՞նչ զգացողություն ունեիք, երբ նորակառույց գիտական համալիրի պատին եւ մի քար էր ավելանում, – փորձում են շոշափել նրա տրամադրությունը:

– Միշտ հաճելի զգացողություն են ապրել, որ Մատենադարանի կարողություններն ենք ընդլայնում, նոր պայմաններ ստեղծում: Դա երեւի եզակիներին է բախտ վիճակվում, չէի ասի, թե հենց ինձ պիտի բախտ վիճակվեր, բայց այդպես ստացվեց, եւ անչափ գոհ եմ:

Գառնիկ Յովակիմյանը 1990-ականների Սիսիանի երկաթբետոնե կառուցվածքների «Ուստինը» բաց բաժնետիրական ընկերության տնօրենն էր: «Երբ երկաթբետոնե կառուցվածքների պահանջարկը նվազեց, ձեռնարկության արտադրությունը շարունակելու մի քանի տարբերակ քննարկեցինք: Ընտրությունն ընկավ քարի արտադրության վրա: «Ով փնտրում է, նա գտնում է» ռուսական ասացվածքը եւս մի անգամ ապացուցեց իր կենսունակությունը: Քարի արտադրության հաստոցներ բերեցի, ճիշտ է, հիմա դրանք պարզունակ են թվում, բայց այն ժամանակ բավականին լուրջ մեխանիզմներ էին: Առաջին արտադրանքից՝ բազալտի քար, առաքել ենք Երեւանում կառուցվող ցեղասպանության թանգարանի շինարարությանը: Հետո մայրաքաղաքում ավելացան նոր հասցեներ՝ Ռուսաստանի եւ Ֆրանսիայի դեսպանատներ, եւ այդպես շարունակ, – հին օրերն է վերհիշում Գ.Յովակիմյանը, իսկ ավելի նոր ժամանակների մասին պատմում է, որ համագործակցելով «Հորիզոն-95» կազմակերպության հետ, ավարտին են հասցրել Լեռնային Ղարաբաղի նախագահական պալատի շինարարությունը, իսկ 2011-ին սիսիանյան քարատեսակով՝ տրավերտինով երեսապատել են Արամ խաչատրյանի տուն-թանգարանի կամարաշարը: Փորձում ենք նրանից տեղեկանալ եւ մեզանում քարատեսակների պաշարների, եւ շուկայում դրանց պահանջարկի վերաբերյալ: Նրա համոզմամբ՝ քարերի պաշարները Հայաստանում հետազոտված են եղածի 20-30 տոկոսի չափով, իսկ հայկական քարատեսակներից միջազգային շուկայում մրցունակ կարող են լինել տրավերտինը, անդեզիտային բազալտները եւ ֆելզիտային տուֆերը: Ֆինանսատնտեսական ճգնաժամը եւս իր բացասական ազդեցությունն ունեցավ քարի արտադրության եւ իրացման վրա,

բայց այժմ քարի շուկան եւս աշխուժություն է ապրում:

– Արթուր Մեսչյանը շատերիս մտապատկերում համոմ է կիթառով, նվագախմբի հետ իր հայտնի երգերը հնչեցնելիս, նաեւ համերգային շրջագայություններով եղել է մեր կողմերում, իսկ ինչպիսի՞ն է Արթուր Մեսչյան ճարտարապետը, նախագծի հեղինակը, անհատը, դուրսի՞ն է աշխատել նրա հետ, թե՞...


– Շատ ավելի պարզ ու հասարակ է, քան մեզնից յուրաքանչյուրը, – ասում է Գառնիկ Յովակիմյանը, – հնարավոր չէր, որ նա մտնի շինհրապարակ եւ ձեռքով չբարեկարգեր՝ հասարակ բանվորից մինչեւ բարձր պաշտոնյա, անկեղծորեն չիտաքրքրվի նրանց որպիսությամբ: Արթուր Մեսչյանը եզակի ճարտարապետներից է, ով ամեն օր շինհրապարակում էր, քանզի կառուցման ընթացքում նոր խնդիրներ էին ծագում, որոնք լուծվում էին տեղում: Ռոկվիտեն լրացուցիչ կառույցը գլխավորին միացնելը միշտ էլ դժվարություններ է հարուցում: Որոշ ճարտարապետներ նրանից շատ բան ունեն սովորելու, թե նախագծողը շինարարի հետ ինչպես պիտի աշխատի: Եվ ամենակարեւորը՝ իր երկիրն անչափ սիրում է եւ դա ամուսն է լռելյայն, առանց թմբկահարելու:

– Ի՞նչ պլաններ ունի ընկերությունը, որ ղեկավարում է Գառնիկ Յովակիմյանը, շինարարներն ապահովված են աշխատանքային ճակատով:

– Համեմայնդեպս, ողջ տարվա ընթացքում մեր երեսապատող բանվորները միշտ աշխատանք են ունեցել: Այս օրերին մեր շինարարները Բնունիս գյուղում դպրոց են կառուցում: Երկու ամսից կհանձնենք շահագործման: Առաջարկ ենք ստացել Դիլիջանում երեսապատման աշխատանքներ իրականացնել: Շատ լուրջ կազմակերպություն է առաջարկ անողը, առայժմ բանակցությունների փուլում է գործընթացը: Չպիտի մոռանանք, որ մեզ տրվող պատվերներից է կախված նաեւ քարերի արտադրության գործարանի ծավալների ընդլայնումը:

Իսկ Մատենադարանի վերակառուցման մասին ասում է, որ դրան մասնակցում էին մի շարք կազմակերպություններ, որոնց աշխատողների թվում շատերն էին սիսիանյան ծագումով. «Դրանից մեծ հպարտության զգացում էի ունենում եւ կատակով ասում. Երեւանում Մատենադարանը սիսիանցիներով ենք կառուցում»:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Մատենադարան շենքը Կառնապարից եւ հարթակները

